

7488.

7489

English Group

Uwunc

91(47.925)

p-14

1904

1904

91(47.925)

թ-14

Ա. ՔԱԼԱՆԹԱՐ

Ս Ա Ս Ո Ւ Ն

ԸՇԽԱՐՀԱԳՐԱԿԵՆ ՔԱՐՏԻԶՈՎ

Երրորդ տպագրութիւն.

2004

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մադաքեան փողոց № 15

1904

(41)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշխարհագրական դիրքը և տնտեսա-
կան վիճակը

I. Երկրի դիրքը: Լեռները.— Անդօք, Կօրդուք,
Ծովասար, Մարաթուք սարերը:— Գաւառակներ՝
Շատախ, Դալօրիկ, Ղիանք, Ղուլի, Խութ, Գիւղերը:

II. Ժողովրդի առանձնայատկութիւնները:— Սա-
սունցու քաջութիւնը:— Սրբատեղերը և աւերակ-
ները:— Հագուստը, լաքան կօշիկը, տները:— Քիւր-
դերը և նրանց յարաբերութիւնները հայերի հետ:

III. Բնութեան տուրքերը և հարստութիւնները:
Մանանայ.— Անտառները.— Դահուկներ:— Լեռնա-
յին բուսականութիւն: Կաղ և նրա գործածու-
թիւնը:— Ընկուզենիներ:— Հանքեր.— Հողը, նրա
որակութիւնը և քանակութիւնը: Արհեստական
արտեր և այգիներ:— Հողի պարարտացնելը:

IV. Հողագործութիւնը, — Հացահատիկներ՝ ցո-
րեն, գլգել, սորեկ և այլն:— Իւղ մատակարարող
նիւթեր՝ կտաւատ, պղինձը և մրկիթ, — Բամբակ և
առւոյտ. — Մրգեր: Անասնապահութիւն՝ կով, ոչ-
խար և այծ. — Կաթնատնտեսութիւն:— Շերամապա-
հութիւն:— Մեղուարուծութիւն:

V. Բնդհանուր ակնարկ Սասունի վրա, — Սասու-
նը հին ժամանակներում:— Վարչական և տնտեսա-
կան, արտաքին և ներքին փոփոխութիւններ:— Սա-
սունցիների ծանր և վրդովված դրութիւնը աղէ-
տից առաջ:— Վերջաբան:

Дозволено Цензурою, Тифлиси, 27-го Августа 1904 г.

5-6647-*with*



2129-70

8

I

Երկրի դիրքը:—Լեռներ, Անդոֆ, Կորդուֆ, Մովսսար, Մարտ-
բուֆ սարերը:—Գաւառակներ Շասախ, Գալօրիկ, Ղիսմֆ,
Ղուրի, Խուր:—Գիւղեր:

Լեռնային այն երկիրը, որ կոչւում է Սա-
սուն, ուր տեղի ունեցան 1894 թուին, ամառը,
տխուր անցքեր, աւերումներ և կոտորածներ,
գտնւում է Բիթլիսի նահանգում, Վանի լճից դէպի
արևմուտք և հարաւ-արևմուտք, Մուշ քաղաքից
դէպի հարաւ:

Սասունը՝ լեռների, ժայռերի, լաւթերի, ան-
թիւ ձորերի, կիրճերի, քարանձաւների մի կու-
տակում է, ուր տեղ-տեղ բացւում են փոքրիկ
հարթութիւններ երկրագործութեան համար, սա-
րաւանդներ՝ անասունների հօտերը արածացնելու
համար:

Այդտեղ ժողովուրդը դժուարութեամբ է հայ-
թայթում իր ապրուստը: Դարերի ընթացքում
կպած, բեկոված լինելով հայրենի երկրին, նա
խլել է բնութիւնից բոլոր այն խորշերը, ուր կա-
րող էր նա սերմ գցել հաց ստանալու համար և
ծառեր տնկել պտուղներ արգիւնաբերելու հա-
մար: Շատ տեղ նա արհեստական արտեր է շի-
նել, քար ու կրով ամրացնելով նրանց եզերքները

և պատնէշներ կանգնեցնելով հեղեղների կործանիչ ոյժը կոտորելու համար:

Սուր ուսումնասիրութեան արժանի է Սասունի ժողովրդի տնտեսական և առանձին կեանքը: Նա պարունակում է իր մէջ շատ բնորոշ, հետաքրքրական կողմեր, որոնք լոյս են ավելում թէ Սասունի և թէ նոյն պայմաններում ապրող ժողովուրդների կենցաղավարութեան առանձնայատկութիւնների վրա:

Ներկայ գրուածքով մենք կամենում ենք ուսումնասիրութեան մի սկզբնական փորձ արած լինել: Մենք ժողովեցինք մեր տեղեկութիւնները այն սասունցի պանդուխտներից, որոնք սոսկալի կոտորածից յետոյ, թափառելով զանազան տեղեր, հասել էին և Անդրկովկաս: Նրանց միջոցով և քարտէզների օգնութեամբ կազմեցինք և այն աշխարհագրական ուրուագիծը որ կցում ենք մեք աշխատութեան:

Սասունցիները իրանց երկիրը անուանում են Գաւառ: Հին Սասունը գտնվում է այդ գաւառի ծայրում և մի փոքրիկ գիւղ է, որի բնակիչները ներկայումս քիւրդեր են:

Սասունի լեռների ամենամեծ բարձրութիւնը Անդօք սարն է: Վերջին կոտորածների ժամանակ Անդօք սարը վերջնական ապաստանատեղն էր թիւրք զօրքերով և քիւրդ հրոսակներով պաշարված հայ գիւղականների համար:

Անդօք սարը գտնվում է մի լեռնաշղթայի վրա, որ ձգվում է դէպի արևմուտք և հարաւարևմուտք: Այդ լեռնաշղթայի վրա բարձրանում

են հախ Բեփի սարը, յետոյ Արքնաղբիւր, Կանիէղարսէ, (կոչվում է նոյնպէս Հեղինի սար) բարձրութիւնները:

Եթէ բարձրանանք Անդօք սարի գագաթը և հայենք շրջակայքին, մեր առաջ կը ներկայանայ հետեւեալը:

Հիւսիսում անցնում է մի լեռնաշղթայ, արևմուտքից դէպի արևելք ուղղութեամբ, որ կոչվում է Կօրդուք: Այդ շղթան բաժանում է Մուշի երկիրը Սասունի լեռնագաւառից: Հարաւում կուտակված են Դաւօրիկի սարերը, որոնցից նշանաւորներն են՝ Մերգիր և Սպիտակ սարերը: Հիւսիս-արևելքի հօրիզոնում մթնանում են Սուրբ լեռները: Արևելքում և դէպի հարաւ-արևելք զետեղված է Ծովասարը իր լայնանիստ լանջերով: Հեռու հարաւ արևելքում երևում է սրբազան Մարաթուքը:

Լեռնային այս բոլոր երկիրը բաժանված է փոքրիկ գաւառակների: Անդօքը իր հիւսիսային ստորոտներով գտնվում է Շատախի մէջ, որ շարունակվում է դէպի արևելք և հարաւ-արևելք: Դաւօրիկի լեռներում զետեղված գիւղերը մտնում են Դաւլուրիկ գաւառակի շրջանը: Դաւօրիկից դէպի արևմուտք ձգվում է Դիանք կամ Խիանքը, որի հիւսիս-արևմուտքից սկսվում է Դուլփի կամ Սուլփի կոչված գաւառակը:

Շատախի վերին մասում, Անդօքից դէպի հիւսիս, գտնվում են Գելիեգուզան, Ալիան, Շենըկ, Սեմալ, Գելիեգենման գիւղերը, որոնք վերջին աղէտների ժամանակ կազմում էին

հայերի և քրիւղերի ու թիւրքերի ընդհարման կենտրոնը:

Այդ գիւղերից ամենանշանաւորը և ամենամեծն է Գեւորգեոսեան գիւղը, որ ունի 200-ից ավելի տներ: Գիւղը գտնւում է ձորում և գետակով բաժանւած է երկու մասի: Գետակը, որ կոչւում է Անդօքա-ջուր կամ Կանիբաջի, բղխում է Անդօք սարի խորշերից և մտնելով մի խոր ձոր՝ անցնում է նախ Գեւորգեոսեանի միջով, յետոյ թեքւելով դէպի արեւելք և հարաւ՝ գնում է քրիւղերի երկիր: Շենքի ու Սեմալ գիւղերի մօտով էլ անցնում են գետակներ, բայց համեմատաբար փոքր: Սակայն ջուրը այնքան առատ է, որ կարողանում են ջրաղացներ բանել: Գեւորգեոսեանը ունի եօթը ջրաղաց, Շենքի և Սեմալը՝ երկու երկու ջրաղաց:

Գեւորգեոսեան գիւղը շատ յարմար գիրք ունի պաշտպանվելու համար: Ձորի եզերքները, որի խորութեան մէջ ընկած է գիւղը, բարձր են և կարողութիւն են տալիս յետ մղելու յարձակվողներին, թափելու նրանց վրա գնդակների մի ամբողջ կարկուտ և միևնոյն ժամանակ ազատ ֆալու թշնամիների հարուածներից: Մինչդեռ Շենքի և Սեմալ գիւղերը յարմար գիրք չունեն պաշտպանվելու համար: Այդ է պատճառը, որ երբ սկսվեց Շենքի և Սեմալ գիւղերի շրջանում 1894 թուի ընդհարումը, այդ գիւղերի բնակիչները շտապեցին Գեւորգեոսեան և այդտեղ կարողացան մաքառել կատաղի հրոսակային արշաւանքի դէմ ամբողջ երեք շաբաթ:

Շենքի և Սեմալ գիւղերից սկսվեց քրիւղերի հետ առաջին մասնաւոր ընդհարումը, որ յետոյ իբրև մի կայծ՝ հրդեհեց շրջակայքը, անցնելով Գեւորգեոսեան և Աղբիկ գիւղերով դէպի Գալօքիկի և մասամբ Ղիանքի գիւղերը: Շենքի և Սեմալ գիւղերը յայտնի են իրանց խաշնարածութեամբ: Այդ գիւղերը գտնւում են այն ճանապարհի վրա, որով գեւորգեոսեանցիները գնում են Մուշ:

Շենքի գիւղի հողի սահմանում գտնւում է մի խոտաւէտ ընդարձակ մարգագետին, որ կոչւում է Մրկեմոսեան: Այդ մարգագետնում էր վրան զարկել թիւրքական զինուորների այն վաշտը, որ 1894 թուի գարնանից նախօրօք ուղարկւած էր ապագայ աղէտի տեղը և հետամուտ էր լինում այն բոլոր գործողութիւններին, որոնք տեղի էին ունենում Սասունի լեռներում: Այդ վաշտն էր, որ զբաղւած էր քրիւղերին զինելով՝ քրիստոնեայ տարրի դէմ կռուելու համար:

Եթէ Շենքիից և Սեմալից գնանք դէպի Շատախի ստորին գիւղերը, ճանապարհի վրա և նւրբանից դուրս՝ կը հանդիպենք Անթանիա, Քօփ, Քեղաշէն գիւղերին: Քօփի կողմից գալիս է մի փոքրիկ ջուր և խառնվում Անդօքա-ջրի հետ:

Շատախի բնակիչները հայեր են:

Շատախից դէպի արեւելք և հիւսիս-արեւելք ձգվում է Խուլթ գաւառակը, որի բնակիչները նոյնպէս մեծ մասամբ հայեր են: Խուլթի շրջանում կան և լայնատարած սարահարթեր, օրինակ ս. Աղբրիկից վերև: Ինքը ս. Աղբրիկը նշանաւոր

սրբութիւնն է ճանաչված շրջակայ գիւղերի համար, որոնք ուխտագնացութիւն են անում դէպի այնտեղ:

Այն խոր ձորը, որի միջով անցնում է Անդօքաշուր դետակը, թողնելով Գեղիկոզան գիւղը, անցնում է Դաւթօրիկի միջով և յայտնի է ժողովրդի մէջ Դաւթօրիկի ձոր անունով: Այդ ձորը բաժանում է Դաւթօրիկի գիւղերի մեծ մասը դրսի աշխարհից և ընդհարումների միջոցին պաշտպանում է երկիրը թշնամիների յարձակումներից շնորհիւ իր սուր և ուղղահայեաց եզերքների, որոնք իրանց ժայռոտ կողերով անկարելի են դարձնում մարդկանց և անասունների երթևեկութիւնը մէկ մասից դէպի միւսը:

Այդ ձորի մէջ յայտնի է Սատանի կամ մուրջ անուանված տեղը, որ գտնվում է մերձաւորապէս Եղգարթ գիւղի գծի ուղղութեամբ և որ լինելով հաղորդակցութեան տեղ, կարող է միևնոյն ժամանակ թշնամիներին չարաչար ծեծելու մի կէտ նկատվել: Եւ լեռնական ժողովուրդը յաճախ օգտվել է անցեալում այդ գերբից՝ կամուրջի վրա չբացնելու օտարների ցանկութիւնը—մտնել Դաւթօրիկի երկիրը:

Ձորից դէպի ձախ ձգվող տարածութեան վրա քիչ գիւղեր կան, օրինակ, Հեթինք, Աղբիկ կամ Աղբինք և մի երկու ուրիշ բնակութիւններ: Գիւղերի մեծ մասը գետեղված է այն լեռնային տարածութեան վրա, որ գտնվում է ձորից դէպի աջ: Այդ գիւղերից նշանաւորներն են՝ Դաւթօրիկ, Հլօղինք, Սպղանք, Հօսնուտ, Հարթք, Հաքմաք: Կան

և փոքրիկ գիւղեր, ինչպէս Փորխ և Դվալին:

Դաւթօրիկը Մերգիր և Սպիտակ սարերով բաժանված է Դիանքի գիւղերից: Դիանքի մէջ յայտնի է Իշխնձոր գիւղը, որ առաջին կոտորածի ժամանակ մեծ մասնակցութիւն ունեցաւ: Նա բազմամարդ գիւղ է, մօտ 80 տնից բաղկացած: Դիանքի գիւղերի մէջ յիշենք Արտգունք, Սաղղուն, Հեղին, Մազրէ, Կարմիր Արա և Ընկուզնակ գիւղերը:

Ընկուզնակ և Հեղին գիւղերը գտնվում են միևնոյն գետակի վրա, որ սկիզբն է առնում Արքնաղբիւրի և Անդօքի շղթայից: Այդ շղթան, պտոյտ անելով, իր կողերով հասնում է արևմտեան կողմից մինչև Հեղինի սահմանները: Այստեղ, Հեղինից վերև, Կանիէզարսէ սարերում ընկաւ Շէնրկ գիւղի ուն, քաջ Գրգօն, սասունցիների պարծանքը, երբ թողեց Անդօք սարը, ուր պաշտպանվում էին երկար ժամանակ սասունցիները, և ելք էր որոնում թշնամիների ձեռքից ազատելու իր խումբը:

Ղուլփ գաւառակը համարեա չէր մասնակցում առաջին կոտորածին, բայց նա էլ ենթարկվեց աւերումների թէ քիւրդերի և թէ զօրքի կողմից: Ղուլփի մերձակայ մասում յայտնի են Գեղարվան, Ահրօք գիւղերը, փոքր ինչ հեռու է հուր, Մսըրձոր, Ընձքար գիւղերը և այլն: Ղուլփի մէջ շատ կան քիւրդեր, որոնք կազմում են ամբողջ գիւղական ազգաբնակչութեան մի երրորդական, իսկ երբեմն և կէս մասը:

Պէտք է նկատել, որ սասունի գիւղերը շատ

անգամ կազմված են լինում մի քանի թաղերից կամ բաժիններից, որոնք ունենալով իրանց մասնաւոր անունները, միասին յայտնի են գիւղի ընդհանուր անունով: Այդ հանգամանքն է պատճառ այն մեծ տարբերութեան, որ կան վիճակագրական թուերի մէջ: Մէկը հաշվում է, օրինակ, Դաւօրի գիւղի տների թիւը 30—40, միւսը հասցնում է՝ մինչև 200 — 220-ի: Դա նշանակում է, որ բուն կենտրոնական գիւղը ունի 30 — 40 տուն, իսկ իր թաղերով միասին 200—220:

Այստեղ առաջ ենք բերում գիւղերի մեծութեան վերաբերեալ հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները: Գեղի գոլգոն գիւղը ունի մօտ 200 տուն, Շենրկ՝ մօտ 100, Սեմալ՝ մօտ 80, Ալիան՝ մօտ 160, Գելիեգենման 30—40 տուն:

Դաւօրիկը ունի բուն գիւղում 30—40, շրջակայ տեղերով մինչև 180—200 տուն, Հաքմաք բուն գիւղում 20 — 25, շրջականերով մինչև 80 տուն, Սպղանք 80, Աղբիկ 65, շրջականերով 150 տուն, Հեթինք 60—70, Դվալինք 15—20, շրջականերով մինչև 60—70 տուն, Հարթք 20, շրջականերով մօտ 50, Հլօղինք 40, Փորխ 15, Հօսնուտ 15 տուն:

Դիանքի մէջ Իշխնծորը ունի 70—80, շրջականերով 170—200 տուն, Ընկուզնակ 60, Սեիթ 70, Արտզունք 80, Կարմիր Արտ 20, Մաղբէ 30, Սաղգուն 200, Փարգա 300, Հեղին 80 տուն:

Դուրիի մէջ Գեղարվանը ունի 60—70 տուն, Ահրօնք 150 — 160, Ընծար 240, Կօկնածոր 35 տուն և այլն:

Աւելացնենք դրանց վրա և հետեւեալ գիւղերը. Սաֆօի տուն 17, Արգիկ 80, Շուղեկ 20, Շուշնամերկ 30, Քեղաշէն 40, Ներքին Կօլիկ 30, Փոշկանձիք 15, Կիպերնին 30, Տափքար 30 տուն և այլն:

Այս թուերը ճիշտ են միայն մերձաւորապէս, որովհետեւ վիճակագրված են ընդհանուր ձևով, պատմողների ստացած տպաւորութիւնների հիման վրա: Յամենայն դէպս՝ յիշատակված գիւղերի շրջանում ապրում էին ոչ պակաս քսան հազար հոգի հայ, որոնցից մի նշանաւոր մասը կոտորվեց, կորաւ կոտորածի ժամանակ, իսկ մնացածները ցրվեցին զանազան կողմեր, սպասելով իրանց վիճակի պարզվելուն:

Գրքոյկիս ներկայ երրորդ հրատարակութեան մէջ առաջ կը բերենք և հետեւեալ տեղեկութիւնները, որ վերցրել ենք քաղաքական մամուլից:

I. Շ Ա Տ Ա Խ

տուն		տուն	
հայ քիւրդ		հայ քիւրդ	
Կերմա . . .	30 —	Շուշնամերկ . . .	25 —
Քօփ . . .	45 —	Սեմալ	65 —
Իրիցանք .	10 —	Շէնրկ	55 —
Տափրկ . .	17 9	Գելիեգենման	15 —
Դիւղաշէն	15 —	Գելիեմսուր .	20 3
Ընդամենը 297 տուն հայ և 12 տուն քիւրդ:			

II. ԳՍԻԱՍՏ ԿԱՄ ՄԻՋԻՆ ՄԱՍ.

տուն		տուն	
հայ քիւրդ		հայ քիւրդ	
Գելիեզուզան 120	—	Աղբի . .	80 —
Ալիանք . . .	60 —	Իշխնձոր	50 —

Ընդամենը 310 տուն հայ:

Գելիեզուզանը բաժանւում է հետեւեալ թաղերի՝ Խարձնգոմ, Տաղվրնի, Ղարբըջան, Մխիթար, Մղրէսան, Հօսիլներ, Հիւսէյնցիք, Խաւօի Մղրէն, Կալբղիկ, Տահօլներ, Ռաշքներ, Ամբարներ, Խօջօքներ, Մէրիկէր, Հարմօի Գոմեր, Փալի Գոմեր, Ալօճակ և Եկեղեցւոյ թաղ կամ բուն գիւղ, թաղերից մի քանիսը բուն գիւղից մէկ ժամ հեռու են գտնւում:—Աղբի բաժանմունքներն են՝ Աղբի, Խաւօ, Թիւրիկ և Կալառաշ:—Իշխնձորը ունի չորս թաղեր՝ Կալիք, Նորհան, Խուզըրու արտեր և բուն գիւղը:—Ալիանք առաջ համարվում էր Գելիեզուզանի մի թաղը, իսկ յետոյ գտնվեց, կազմելով առանձին գիւղ, որ ունի ութ թաղ:

III. ԾՈՒՎԱՍՍԱՐԻ ՓԷՇԵՐ.

տուն		տուն	
հայ տուն		հայ քիւրդ	
Հեթինք . .	35 —	Հոսներ . .	1 —
Խոճոճվանք	8 10	Քարավանք	3 —
Արգիկ . . .	10 —	Խլհովիտ .	8 —
Հարկօրք . .	15 8	Քորախու և	
Քրդամանք	15 —	Արախու .	12 —
Հաւկոնք . .	6 —		

Ընդամենը 113 տուն հայ և 18 տուն քիւրդ:
Ծովասարի փէշերի գիւղերը, քիւրդերի ընդ-

հարուսներին դիմանալ չը կարողանալով, ցիրուցան են եղել թողնելով այն, ինչ որ այստեղ յիշված է:

IV. Դ Ա Լ Ի Օ Ր Ի Կ.

տուն հայ		տուն հայ		տուն հայ	
Հլոդինք . .	25	Դաւօրիկ .	25	Հագմանք .	10
Դաւանք . .	15	Արդվինք .	15	Փորխ . .	15
Հոսնուտ . .	4	Հարթք . .	10	Սպաղանք	25
Չորեր . .	3	Եղկարտ . .	12.		

Ընդամենը 174 տուն հայ:

V. ԲՈՒՍԱՆԱՅ ԳՍԻԱՍ.

տուն հայ		տուն հայ		տուն հայ	
Դաժպետրիկ	4	Մարաթօ .	10	Մթինք . .	22
Քաջաւինք	15	Կօռնիկէս	7	Բսանք . .	9
Թարուկ . .	14	Տալօր . .	3	Փշուտ . .	5
Միջգեղ . .	28	Խնձորիկ .	23	Ջրթնիկ .	18
Պէլօնք . .	6	Մղրէ և Կրէձոր	12	Գոմք . .	18
Թաթունք . .	6:				

Ընդամենը 200 տուն հայ:

VI. Ղ Ի Ա Ն Ք.

տուն		տուն	
հայ քիւրդ		հայ քիւրդ	
Պերմ . . .	80 —	Սաղտուն .	30 —
Արխոնդ .	20 —	Հեղին . . .	15 —
Պահամտա	20 15	Արտկունք .	30 —
Արսըք . .	15 10	Ընկուզնակ	40 —
Փառկա . .	40 —	Սէվիթ . . .	30 —

Ընդամենը 320 տուն հայ և 25 տուն քիւրդ:

VII. Ղ Ո Ի Լ Փ.

	տուն			տուն	
	հայ քիւրդ			հայ քիւրդ	
Գեղերվանք	80	—	Փասուր . .	40	40
Ահարոնք .	60	—	Էհուր . . .	30	—
Շուղէգ . .	15	10	Ընձքար .	80	—
Կասգէ . . .	50	50:	Ընդամենը	355	տուն հայ և 100 տուն քիւրդ:

Այս թուերից երևում է, որ Սասունի հայա-
բնակ մասը բաղկացած է 1769 հայ և 155 քիւրդ
բնտանիքներից: Թէև հայ շրջանները քիչ բացա-
ռութեամբ ազատ են քիւրդերից, սակայն ազատ
չեն նրանց դրացիութիւնից: Քիւրդերը բնակվում
են Ղուլիի, Ղիանքի և Բուսանաց գաւառակների
շրջակայքում:

Անկասկած՝ ամեն մի լուրջ ընդհարումից
յետոյ գիւղական ազգաբնակչութեան կազմը զգալի
փոփոխութիւնների է ենթարկվում:

II.

Ժողովրդի առանձնապահութիւններ:—Սասուցու բաշուրիւնը:
—Սքասեղերը եւ տեւակները:—Հագուստը:—Լափան կոշիկը:
Տնէրը:—Քիւրդերը եւ ցրանց յարաբերութիւնները հայերի նե:

2129-70

Սասունի ժողովուրդը ապրում է նահապե-
տական կեանքով: Մի տան մէջ կարելի է տես-
նել 10—20, իսկ առանձին դէպքերում մինչև 40 և
աւելի հոգի:

Սասունցիները համարեա մշտապէս իրանց
գիւղերումն են ապրում: Որքան և ծանր լինի
նրանց կեանքը, որքան և դժուարութեամբ հայ-
թայթում լինեն նրանք իրանց ապրուստը, այնու
ամենայնիւ նրանք աշխատում են մնալ իրանց
գիւղերում, պանդխտութեան չը դիմել:

Սասունցին աշխատասէր է, սակաւա-
պէտ, քաջ և աւանդապահ: Իր զարմանալի
աշխատասիրութեամբ և իր անընկճելի տոկոս-
նութեամբ նա կարողացել է կուլտուրական բա-
ղադրեալ կեանք և արգիւնագործութիւն ստեղծել
իր երկրում, մինչդեռ նրա դարաւոր հարեան քիւր-
դը դեռ ապրում է նախնական աստանդական
կեանքով և ոչ միայն չէ աշխատում նմանել հային,
այլ և յաճախ քանդում է այն, ինչ որ շինել է հայը:
Սասունցին իր քանդութիւնը պահպանել



է շատ հին ժամանակներից: Նրան նպաստել են և հայրենի անառիկ լեռները, և անանցանելի ձորերը, և սերունդից սերունդ անցնող աղատասիրութիւնը: Խաշնարածութիւնը, որ տարածված է Սասունի ազգաբնակչութեան մէջ, վարժեցրել է մարդուն պաշտպանել իրան և իր հօտերը թշնամիների յարձակումներից: Սասունցի, ոչ միայն մատաղահաս երիտասարդները, այլ և յաճախ հասակաւորները ունեն իրանց վարժութիւնները՝ պատերազմական ոգի և ընդունակութիւն զարգացնելու համար: Ազատ և տօն օրերը նրանք փորձնական յարձակումներ են գործում միմեանց վրա մեծ մահակներով և պաշտպանվում են վահաններով: Այդ վահանները, որ կոչվում են մարթալ, պատած են հաստ կաշիով, որի վրա գամված են հաստ մեխեր, լայնագլուխ բևեռներ: Այդ վահաններով սասունցին երբեմն փորձում է նոյն իսկ հրացանի գնդակները կասեցնել իր անձից: Կտրիճ մարդը շատ յարգված է Սասունում և սասունցիները երկար տարիներ պահպանում են հին կրտսերիճների յիշատակները: Շենքկցի հռչակաւոր Գըրգօյի և ուրիշ շատ անուններ, իբրև սրբութիւններ, պատում են այժմ սասունցիների բերանում: Գեղեգուզանցիներից շատերը իրանց աէս Աւէի հետ միասին՝ անջնջելի երեւներ գրաւեցին Սասունի պատմութեան մէջ:

Քաջութեան մէջ յետ չէ մնում և սասունցի կինը, որ գիտէ ոչ միայն մահակով կռվել, այլ և երբեմն նաև հրացան գործածել: Վերջին կոտորածների ժամանակ շատ կանայք հերոսաբար

կռուեցին տղամարդկանց հետ միասին:

Իբրև նահապետական ժողովուրդ՝ սասունցիները ամենայն ճշտութեամբ պահում են թէ կրօնական և թէ այլ տեղական սովորութիւնները: Պաս պահել, ուխտ գնալ, տան մէջ ընդունված, սահմանված կարգ ու կանոնը կատարել, պարտաւորեցուցիչ են իւրաքանչիւր սասունցու համար: Սասունցին ունի և շատ նախապաշարմունքներ և կռապաշտութիւնից մնացած հաւատալիքներ: Նա առանձին երկիւղածութեամբ է վերաբերվում աւերակներին, հին տաճարներին, խաչքարերին:

Սասունի ժողովրդի մէջ զանազան աւանդութիւններ են պատմվում հին իշխանների և թագաւորների մասին: Սասունի ժողովրդի բերանում պահպանվել է և հին հայկական դիւցազններգական վէպի մի հրաշալի մասը, այն է՝ Դաւիթ և Մհերը: Բազրմուտի մօտ եղած բերդի աւերակները և հին պարիսպների մնացորդները յիշեցնում են ժողովրդին անցեալ օրերի մասին: Մի հին բերդ կայ և Կալասընդ ասված տեղում:

Յայտնի են հետեւեալ սրբատեղերը. Խութ սուրբ Աղբրիկը, որի մասին վերև յիշեցինք, սուրբ Թէոդորոս, որ գտնվում է Կալասընդի մօտ, Մատին Առաքեալ՝ Բուն Սասունում, Գոմք գիւղի մօտ: Անդօջ սարի գլխին կայ նոյնպէս մի ուխտատեղ: Գեղեգուզան գիւղից ոչ հեռու, Ալիան գիւղի մօտ, Ամրքնին կոչված տեղումը, կան բազմաթիւ խաչքարեր, որոնց վրա գտնվում են արձանագրութիւններ: Նշանաւոր է և ս. Յովհաննէս վանքը:

Սասունի ժողովրդի լեզուաբարբառը պարունակում է իր մէջ շատ հին հայկական բառեր և սաստիկ տարբերվում է ուրիշ բարբառներից: Նոյն իսկ Սասունի գիւղերում միատեսակ չէ լեզուն: Դաւօրիկի ժողովրդի բարբառը բաւական տարբեր է այն բարբառից, որով խօսում են շատախցիները, օրինակ, Գելիեգուզան, Շենըկ գիւղերը: Ղուլիի և Դիանքի բարբառը աւելի մօտ է Շատախի բարբառին: Սրանցից տարբեր է Մուշի դաշտի ժողովրդի բարբառը: Սասունցիներին խօսակցական լեզուի մէջ շատ անգամ լսվում են և քիւրդական բառեր: Այդ լեզուի մասին գաղափար կարելի է կազմել «Դաւիթ և Մհեր» վէպի վարիանտներից:

Սասունցու հագուստը շատ հասարակ է և աղքատ: Թէ տղամարդի և թէ կնոջ գլխաւոր զգեստն է շապիկը, որի վրա կանայք գցում են երկար շղարշներ, իսկ տղամարդիկ հագնում են կարճ վերնազգեստ: Տղամարդի շապիկը հասնում է մինչև ծունկը, շապիկ թևերը լայն են և նրանց ծայրերին կարված են նոյն կտաւից երկար երկրորդական վերջաւորութիւններ, Գործելու ժամանակ սասունցին այդ վերջաւորութիւնները կապում կշկոտում է և գձում գլխի վրայով դէպի ծոծրակը, դէպի վիզը և այդպիսով յարմարեցնում, որ շապիկի թևերը չը խանգարեն գործին: Կանանց շապիկները երկար են, մինչև գետին: Տղամարդիկ գլխներին դնում են գդակներ, քօլօդներ, արախչիներ, որոնց վրա փաթաթում են թաշկինակներ, կամ ծոպաւոր լաթեր: Այդ արախ-

չիւնները նրանք գնում են երբեմն պատրաստի, իսկ յաճախ գործում են կանայք տանը բուրդից և երբեմն մետաքսից: Կանայք զարդարում են գլուխները արծաթեայ և ոսկեայ դրամներով: Վերջին կոտորածի ժամանակ քիւրդերը և թիւրքական զինուորները, անողոր և անխիղճ կերպով յարձակվելով կանանց վրա, առաջին բոլկից ձեռքները տանում էին դէպի նրանց ոսկեայ և արծաթեայ զարդերը և դուրս պոկում անամօթաբար:

Կօշիկները պատրաստվում են կամ կաշուց, կամ որ աւելի յաճախ է պատահում, կաղմկած են այծի մազից (խարուկ): Իսկ ձմեռները՝ ձիւնի վրա շրջագայելու համար՝ գործ է ածվում փայտեայ կօշիկ, որ կոչվում է լաքան: Դա հեռաւոր մի նմանութիւն ունի այն փայտեայ քօշերին, որ գործ են ածվում մի քանի տեղերում՝ բաղանիքներում: Դա փայտեայ մի տախտակ է, ոտի գարշապարի ձևով, բայց փոքր ինչ աւելի մեծ, որ ամրացնվում է ոտքերի վրա մի քանի կարգ կապիճներով, որոնք խաչաձև փաթաթում են ոտքը և կապում լաքանի զանազան մասերի հետ: Այդ լաքաններով ման եկած ժամանակը ոտքը շատ խոր չէ գնում ձիւնի մէջ և կարելի է դառնում երթևեկութիւնը:

Գիւղական տները Սասունում շինված են հողի մակերևոյթից բարձր: Շատ տեղերում կան երկու յարկանի տներ, պատահում են նոյնպէս և երեքյարկանիներ, օրինակ, Դաւօրիկում: Տներում աշխատում են մաքրութիւն և կարգ ու սարք պահպանել: Հարուստ տները ունեն յարմա-

բութիւններ հիւրերի համար:

Հայերի հարեանները քիւրդերն են: Բացի քիւրդերից այդ տեղերում չը կայ մի այլ տարբ՝ ոչ ասորի, ոչ եզդի, ոչ թիւրք: Սասունցիները թիւրք տեսնում են բացառիկ դէպքերում, երբ կառավարութիւնը ուղարկում է աստիճանաւորներ, պաշտօնեաներ: Բայց վերջին տարիներս սասունցիները չար բաղդ ունեցան տեսնելու մեծ քանակութեամբ թիւրքերի, որոնք զինված, զրահաւորված գալիս են իբր թէ խաղաղութիւն վերականգնելու, ոտի տակ տալով ժողովրդի դարաւոր իրաւունքները, խեղդելով նրա հառաջանքները և աւերելով ծանր ու մաշող աշխատանքով տարիների ու դարերի ընթացքում կառուցած գիւղերը և տները:

Քիւրդերը համարեա բացառապէս մահմեդականն են, սիւննի աղանդին պատկանող: Մենք ասացինք համարեա թէ այն պատճառով, որ նրանց մէջ կայ մի ցեղ, որ զանազանվում է միւսներից և իրան մօտ է զգում հայերին: Դա բաւաքցի քիւրդերի ցեղն է: Բաւաքցիները ապրում են ըստ մեծի մասին Շատախի և Սուլթի շրջաններում, մի բանիսներն էլ Սարգանի և Մաւրաթուքի կողմերում: Բաւաքցիները ունեն իրանց ներքին ճիւղաւորութիւնները, տեղերի կամ իրանց գլխաւորների անուններով: Նրանք շէյխ, մուլլա չունեն, առանձին տաճարներ, կամ աղօթատներ չեն շինում, խօսում են արաբական մի բարբառով, սերտ յարաբերութիւններ ունեն հայերի հետ և համարեա բոլորը գիտեն հայերէն: Նրանք ասում են, որ առաջ իրանք հայ են եղել և միայն հան-

գամանքներից ստիպված հեռացել են, երկար միջոց ծալոված պահպանելով քրիստոնէութիւնը. սակայն ժամանակի ընթացքում կամաց-կամաց օտարացել են: Նրանք սպասում են, որ հայի համար մի երջանիկ օր լուսանայ. այն ժամանակ նրանք էլ բացարձակ կը միանան հայերի հետ: Բաւաքցի քիւրդերը քաջ ժողովուրդ են և միմեանց պատիւը ու շահերը խիստ պաշտպանող:

Մահմեդական քիւրդերի հետ ևս սասունցիների յարաբերութիւնները առաջուայ ժամանակները լաւ էին, բարեկամական, մտերմական: Միայն վերջին երկու տասնեակ տարիների ընթացքում քիւրդերի մէջ սկսեցին երևալ քարոզիչներ, որոնք վառում էին նրանց մէջ կրօնամօլութիւն, ֆանատիկոսութիւն և սերմանում էին ատելութիւն դէպի այլակրօնները:

Ճիշդ է, ընդհարումներ հայերի և քիւրդերի մէջ մշտական եղել են, բայց այդ ընդհարումները ունեցել են մասնաւոր, տեղական, դիպուածական բնաւորութիւն, այնպէս, ինչպէս քիւրդը կռւում է քիւրդի հետ, խաշնարածը խաշնարածի հետ: Մի քանի մարդ կը սպանվէր այս ու այն կողմից, մի կերպ վրէժը կը լուծվէր և ամեն բան կարգի կընկնէր: Սասունցիները այդ ընդհարումների մէջ իրանց շատ քաջ են պահել միշտ և այդպիսով են կարողացել պահպանել իրանց դիրքը հայրենի լեռներում:

Քիւրդերը այս անգամ էլ չէին համարձակվի հայերի դէմ արձակ կռուի ելնել, եթէ յենարան չունենային թիւրքաց կանոնաւոր զօրքի ներկայութիւնը: Այդ զօրքը ոչ միայն խրախուսում էր

նրանց բարոյապէս, այլ և նպաստում էր նիւթապէս, մատակարարելով պատերազմական մթերքներ, զէնքեր ու վառօդ: Շատերը քիւրդերից այժմ սաստիկ զղշոււմ են, որ իրանց թոյլ տուին խարվելու և իրանց հարեանների հետ կռուելու:

Բայց քիւրդերի մի մասը իսկապէս ֆանատիկոսացաւ: Կատաղի թշնամիներ դարձան վերջերս հետեւեալ ցեղերը՝ բաքրանցիներ, վալըքանցիներ, շեղդանցիներ, ինըկացիներ, խարըկանցիներ և այլն: Այդ քիւրդերը ըստ մեծի մասին ձմերուկ են ներքին Դաշտ ասված տեղում, որ գտնվում է Դաւազնիկից հարաւ՝ ցած և տաք տեղերում. իսկ ամառը բարձրանում են Սասունի շրջապատ լեռները—բաքրանցիներ և վալըքանցիները՝ Շատախի լեռները, բաղըքանցիները՝ Դաւազնիկի կողքին, ս. Յովհաննէսի վանքի լեռները և այլն:

Ղուլիի մօտ եղած քիւրդերը, որոնք ապրում են աշիրաթային մեծ կազմակերպութեամբ, համեմատաբար քիչ մասնակցութիւն ունեցան առաջին կոտորածների ժամանակ: Նրանց մէջ յայտնի են քանըքացիներ, խօշկանցիներ, նադարանցիներ:

Բուն Սասունի, Բաղրամուտի կողմերում, Ծոփասարի շուրջը և գէպի Մարաթուք ցրված են խարզանցի, խանաւդալցի քիւրդերի զանազան ցեղերը: Այդտեղ յայտնի է քիւրդերի մէջ հաւուստ և տոհմաւոր քիւրդ Խշման-աղան:

Սասունից հեռու են ապրում արմանցի, հայդարանցի և այլ ցեղերը և նրանք բացառիկ ընդհարումների ժամանակ են միայն երեւում Սասունի մօտերքը, իբրեւ զինակիցներ այս կամ այն

արիւնակից և բարեկամ քիւրդերին:

Սասունի քիւրդերի մէջ այժմ յայտնի են երկու շէյխեր, Զիլլանում ապրող շէյխ Մահմադը և Դուդարում (Հեղինի մօտ) ապրող շէյխ Ամարը: Դրանք քիւրդերի առաջնորդներն են, կամ ինչպէս սասունցիներն են ասում, քիւրդերի եպիսկոպոսները: Առաջին կոտորածի նախապատրաստական գործողութիւնների մէջ այդ շէյխերը ունեցան մեծ մասնակցութիւն: Նրանց հետ էր խորհրդակցում Բիթլիսի նախկին նահանգապետ և տխրահռչակ քաղաքագետ Թահսին-փաշան:

Քիւրդերի մէջ հողագործներ քիչ կան: Նրանք ապրապում են ըստ մեծի մասին խաշնարածութեամբ: Բաքրանցիների մէջ պատահում են մինչև 1000 գլուխ ոչխար պահողներ: Քիւրդերից պատահում են հովիւներ և ծառաներ հայկական գիւղերում, թէև ոչ մեծ քանակութեամբ. բայց հայերից համարեա երբէք չէ պատահում ծառայող՝ քիւրդի տանը: Սասունի հայաբնակ գիւղերում երբեմն պատահում են մի քանի տուն քիւրդեր. նրանք վերջին ընդհարումի ժամանակ ձեռնպահ էին ֆուլում և չը միանալով քիւրդերի հետ՝ չէին վնասում հայերին:

Հաղորդելով Սասունի աշխարհագրական դիրքի և նրա մէջ ապրող ժողովրդի մասին այս համառօտ տեղեկութիւնները, անցնենք Սասունի տնտեսական վիճակի նկարագրութեան, ներկայացնելով նախ այն հարստութիւնը, որ տալիս է բնութիւնը և ապա այն արդիւնաբերութիւնը, որ սասունցու աշխատանքի և մշակութեան արգասիքն է:

III.

Բնութեան տուրքեր եւ նարսուքիւններ: Մանաւայ—Անսառ-
ներ:—Պահուկներ,—Լեռնային բուսականութիւն: Կազ եւ ցրա
գործածութիւնը:—Ընկուզեցիներ:—Հանքեր—Հողը, ցրա որա-
կութիւնը եւ քանակութիւնը:—Արհեստական արեւ եւ այգի-
ներ:—Հողի պարարտացնելը:

Սասունը մասնաւորապէս երկիրն է:

Մասնաւոր իշխում է յուլիս ամսին: Որքան
խոնաւ է օդը, այնքան առատ է մասնաւոր: Նա
չէ թափուլ իրրեւ անձրեւ եւ ձիւն, այլ ցօղի նման
կամաց-կամաց, աննկատելի կերպով, ծածկում է
ծառերի տերեւները, կազի թուփերը: Այն օրերը,
երբ պէտք է մասնաւոր նստի առատ կերպով,
օդը մաքուր չէ լինում, այլ լցված բարակ մա-
ռախուղով, կարծես մի տեսակ մշուշով վարա-
գուրված: Մարդու շորեր նոյն իսկ փոքր ինչ
թրջվում են:

Մասնաւոր, կամ ուրիշ անունով կազը ան-
սպիտակ է, թելի նման, 2—4 սանտիմէտր եր-
կարութեամբ: Նրա հաստութիւնը կարող է լինել
ձիւն ազիւ մի կամ երկու մազի հաստութեան:
Կազի թուփերի վրա նա բաւական չոր է. իսկ ծա-
ռերի տերեւների վրա. օրինակ, լողփիւ վրա, թաց:
Կազի թուփերից նրան թափ են տալիս մի շորի,

թեփսու, կամ մազի մէջ եւ ապա ձեռքով ժողո-
վելով՝ գունդ անում, իսկ ծառերի տերեւներից
նրան ստանալու համար՝ լուսնում են ծառերի
ձիւղերը նրանց վրա եղած տերեւներով հանդերձ
եւ հիւթը ժողովում ամանների մէջ, ուր մանա-
նան կամաց-կամաց նստում է, իսկ ջուրը վեր
բարձրանում:

Հում մասնաւոր համեղ չէ եւ ծանր է ստա-
մոքսի համար: Եփելուց յետոյ մասնաւոր դառ-
նում է մեղրի նման համեղ:

Թէ կազի թուփերից ժողոված եւ թէ ծառե-
րից լուացած մասնաւոր ածուկ են կաթսաների
մէջ, դնում կրակի վրա եփում, լաւ խառնելով: Երբ
նա բաւական եփվեց, ածուկ են նրան օջախների,
կարասների մէջ եւ պահում: Շատերը նրան գերա-
դասում են մեղրից եւ բուփից: Ուտում են իւղի հետ
միասին հացով:

Իւրաքանչիւր տուն ժողովում է մասնաւոր
5—15 լիտր: Երբեմն տանում են նրան Մուշ ծա-
խելու: Նրա լիտրը արժէ 8—10 դուրուշ:

Միջանկեալ կերպով անհրաժեշտ եմ համա-
րում հաղորդել, որ մասնաւոր գոյանում է Փոքր-
Ասիայի եւ մի քանի ուրիշ տեղերում: Այդպիսով
հին երբայեցիների երկնառաք մասնաւոր անապա-
տում բնական մի երեւոյթ է ներկայանում: Նո-
րերս Ենայի պրօֆեսօր Շէպֆէլդ իր ճանա-
պարհորդութեան ժամանակ ակնանատես էր եղել
մասնաւոր իջնելուն Սինա սարի վրա:

Մասնաւոր գոյանալու վերաբերութեամբ

գիտնական ենթադրութիւն կայ, որ նա ոչ այլ ինչ է, եթէ ոչ տամարիքս (*Tamarix Mannifera*) կոչված ծառի հիւթը, որ արտաթորվում է կաթիլ-կաթիլ, ցամաքում ծառի կեղևի վրա և յետոյ քամու միջոցով փոխադրվում հոռու տեղեր, մինչև որ կիջնի ներքև և կընստի ծառերի կամ հողի վրա:

Հիւթի արտահոսութեանը նպաստում է մի փոքրիկ որդ՝ *Coccus Manniparus* անունով, որ ծակծկում է ծառի կեղևը և այդպիսով ճանապարհ բաց անում հիւթի արտաթորման համար: Հիւթը դուրս է գալիս, ինչպէս ասացինք, կաթիլ-կաթիլ և ցամաքում: Ամենաառատ կերպով մանանան գոյանում է յուլիսին և օգոստոսին: Նկատված է և այն, որ մանանան աւելի յաճախ գիշերն է նստում, քան ցերեկը:

Սակայն պէտք է խոստովանել, որ մանանայի գոյանալու բոլոր երևոյթները դեռ ճիշտ կերպով չեն ուսումնասիրված մինչև այժմ:

Սասունը հարուստ է անտառներով և այդու ծառատունկերով: Մեծ անտառներ կան Սեմալի մօտ, Դաւլօրիկի սարալանջերում, Ղուլիի գիւղերի սահմանում, Ընծարի մօտ: Անտառները թէև շարունակ կտրտվում են գիւղացիների պէտքերի համար, բայց նրանք շուտով վերականգնում են: Սասունը ջրառատ երկիր է: Չմուղը նստում է խոր ձիւն, իսկ գարնանը գալիս են յաճախ անձրևներ: Անտառի բուսականութեան սերմերը շուտով արմատանում են, հին ծառերի տակից ծլում են նոր ճիւղաւորութիւններ և

լրացնում են անտառի պակասը:

Անտառի փայտը ծառայում է իբրև վառելիք, իսկ ծառերի տերևները՝ իբրև կերակուր տնային կենդանիների, գլխաւորապէս, ոչխարի և այծի համար: Տերևի պատրաստութիւնը կատարվում է օգոստոսին և սեպտեմբերին, երբ գիւղացիները վերջացնում են ամառային պարապմունքների մեծ մասը: Գիւղացիները այդ ժամանակ խմբերով գնում են անտառ և քշուշով կտրտում են ճիւղերը ու գետին թափում: Յետոյ այդ ճիւղերը խուրձ-խուրձ կապում են և թողնում գետնի վրա մօտաւորապէս մի տասն օր, որպէս զի ճիւղերը և տերևները չորանան: Այնուհետև դէղ են անում այդ խուրձերը և այդպէս պահում մինչև ձմեռ, երբ պէտք է ոչխարին և այծին տանը կերակրել: Այդ ժամանակ գիւղացիները առնում են իրանց հետ դահուկներ, որոնք բալխիրների նմանութիւն ունեն (ռուսական дровни և сани-ների ձևով), և անտառից տուն են կրում ճիւղի և տերևի խուրձերը: Ձիւնի վրայով դահուկները շատ թեթև են շարժվում և մարդիկ, առանց կենդանիների օգնութեան, իրանք կարողանում են առանց մեծ դժուարութեան տուն բերել խուրձերը: Ոչխարները ուտում են տերևները և շատ բարակ ընձիւղները: Մնացած ցախը գործ է ածվում իբրև վառելիք:

Լեռնային բուսականութիւնը բազմազան և է հարուստ: Շատ տեղերում նա այնքան ճոխ բուսում է, որ նրան հնձում են իբրև խոտ և չորա-

ցնում. իսկ յետոյ նոյն հողի վրա արածացնում են անասուններին: Երեքնուկով (*Trifolium*—խնձորախոտ) ծածկված արօտները մննդարար կերակուր են մատակարարում կենդանիներին: Կալլո (*լուպին*) բոյսով առատ տեղերի խոտը պահվում է ոչխարի, այծի և ծնած մաքիների համար:

Լեռներում և դաշտերում շատ բոյսեր կան, որոնք գործ են ածվում և մարդկանց կերակրի մէջ: Գարունը բացվելուն պէս, հազիւ ձիւնը հալվում է, բուսնում է օղիւնը, որ ժողովում են դաշտերից, եփում և ուտում: Օղիւնի արմատը շրէզն է, որ գործ է ածվում մանածի համար, իբրեւ սոսնձանման նիւթ:

Անդօք սարի կողքերում շատ է բուսնում խաւըրծիլ բոյսը, որ ունի յայնատարած տերեւներ և ուղղաձիգ երկայն զօխ, որ վերջանում է մի փոքրիկ թուփով: Խաւըրծիլը ժողովում են և ուտում:

Սասունի լեռներում, մանաւանդ արեգունի տեղերում, շատ է բուսնում կազ, որ թփանման փուշ է և գործ է ածվում իբրեւ վառելիք, բայց մանաւանդ իբրեւ կենդանիների համար կերակուր:

Կազ փուշը (*Astragalus*), ինչպէս յայտնի է, տարածված է և Անդրկովկասում, մանաւանդ Երևանեան նահանգում. բայց Սասունի կազը աւելի խոշոր տեսակիցն է և բուսնում է շատ մեծ քանակութեամբ: Կազի խոշոր տեսակի թփերը այնքան մեծ են, որ երբեմն մի թուփը արդէն կազմում է մի շալակաբեռն, իսկ ընդհանրապէս

8 — 10 — 12 հատն են կազմում մի շալակ: Կազը ունի գեղեցիկ մանիշակագոյն և դեղին ծաղիկներ, որոնք թաղված են փուշերի ծոցում: Այդ ծաղիկները համեղ կերակուր են ոչխարների համար: Կազ կտրտելու համար գործ է ածվում դարձեալ քշուշ, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի հատոց կամ մի հաստ դանակ կեռ ծայրով: Կազը նախ վառում են և փշային մասերը այրում, յետոյ մնացածը՝ բուշը և ճիւղերը՝ կտրտում են շատ մանր կտորներ անում և ապա այդպէս տալիս են կենդանիներին, և այն ըստ մեծի մասին եզներին՝ երեկոյեան ժումին: Կազը մեծ ոյժ է տալիս եզներին, չաղացնում և ամրացնում է նրանց: Կովի և ոչխարների համար նա նոյնպէս օգտակար է, իբրեւ կազուրող կերակուր, բայց կաթի յատկութեանը փաստում է. կաթը ստանում է մի առանձին դառնութիւն: Նկատված է, որ կազ շատ ուտող կենդանու միսն էլ ունի դառն համ:

Կազից ստացվում է մի առանձին տեսակի խեժ, որ յայտնի է կազխեժ անունով: Սասունցիները առանձին ուշք չեն դարձնում այդ խեժի վրա. մի քանի մարդիկ միայն զբաղվում են նրա ժողովելով և ծախում են գիւղերում կամ Մուշում՝ նուկին $1\frac{1}{2}$ ղուրուշ, լիարը 18 ղուրուշով:

Օգտվում ենք դէպքից յայտնելու, որ կազ խեժը լաւ գին ունի եւրօպական շուկաներում և դեղատոնքում և եթէ սասունցիների մէջ գըտնվեն մարդիկ, որ առանձին ուշք դարձնեն այդ խեժը ժողովելու գործի վրա, կարող են յայտնի շահ ունենալ: Վաճառքի մէջ այդ խեժը յայտնի է

Թրագանթ անունով (Gummi Tragantha):

Կաղի թուփերը, կտրտելուց յետոյ, արմատից դժուարութեամբ են վերականգնվում, բայց սերմերից շատ շուտ նրանք արմատ են բռնում և զարգանում:

Սասունի գիւղերի այգիներում, ձորերում շատ վաղ ժամանակից բուսնում են ընկուղ են ինքեր որոնց կոճղերը վերջին ժամանակներս դարձրին իրանց վրա եւրօպական վաճառականների ուշադրութիւնը: Եւրօպացիները արդէն սկսել են արտահանել այդ կոճղերը: Նոյն իսկ մի քանի տեղերի անուններ ցոյց են տալիս, որ այդ երկրում ընկուղ շատ կայ: Վերջին կոտորածի ժամանակ մեծ հոչակ ստացած գիւղի անունը, Գելիեզուզան, նշանակում է քրդական լեզուով ընկուղաձոր: Եւ յիրաւի, Գելիեզուզանում շատ կան ընկուղենիներ և շարունակվում են ձորի ընթացքով: Ընկուղենի շատ կայ նոյնպէս Սպղանքում: Յիշենք և Ընկուղենակ գիւղը Ղիանքում:

Սասունը առատ է հանքերով: Դաւլօրիկի լեռնագօտիում թաղված են երկաթի մեծ պաշարներ: Այժմ յայտնի և մշակվող երկաթահանքերից գլխաւորը գտնվում է Հլօղենց սարում: Դաւլօրիկի ժողովուրդը շատ ժամանակներից ծանօթ է հանքագործութեան: Կան գիւղեր, ուր ամեն տուն ունի հանքագործութեան վարպետներ: Հարդը գիւղում կար մի նշանաւոր վարպետ, որ գործնականապէս ուսումնասիրել էր

հանքագործութեան արհեստը և շահագործում էր մեծ քանակութեամբ երկաթ: Այդ վարպետը՝ Խաչօյեան Գասպար անունով՝ առաջին կոտորածի ժամանակ իր որդու և հարսի հետ ձերբակալվեցին:

Սասունցիին շատ ասացուածներ և երգեր ունի երկաթի և երկաթագործութեան մասին: Տարածված մի երգի մէջ ասված է.

Շինեմ փետատ, խուփ, խաչերկաթ.

Ծանր է դադումս, բայց եմ ազատ:

Երկաթի հանքը համարվում է առատներից: Հանքը հալում են և երկաթը վերցնում: Տարեկան շահագործվում է 6 — 7000 փութ երկաթ: Բացի երկաթից կան և ուրիշ հանքեր, օրինակ պղինձ:

Սասունցիները ընդարձակ հողեր չունեն երկրագործութեան համար: Տափարակ դաշտեր և սարահարթեր թէև կան, բայց մեծ մասամբ ընդարձակ տարածութիւն չունեն: Երկրագործութեան համար պիտանի հողերը կտոր-կտոր ընկած են այս ու այն տեղ, ձորամէջերում, գետակների ափերին:

Ինչպէս մի անգամ յիշատակեցինք՝ սասունցին շատ տեղ հաց ցանելու և խաղող ու միրգ բուսցնելու համար արհեստական արտեր և այգիներ է շինել և այդպիսով կորզել ընութիւնից մշակութեան համար հողեր:

Արհեստական արտ կամ այգի շինելու համար սասունցիները ընտրում են լեռնային լանջերից յարմարը՝ ջրելու և երթեկելու համար: Այդ լանջերի ներքին կողմից որմն են բարձրացնում քար ու ցեխով, երբեմն էլ քար ու կրով

Յետոյ այդ դառնիվայրի ներքին մասում այն-
քան քար են կրում, որ այդ տեղի մակերևոյ-
թը հաւասար հօրիզօնական դիրք ըստանայ:
Այնուհետեւ այդ քարերի վրա ածում են խիճ, ա-
ւաղ, հող, գետակների ավերից խոտախառն հող,
և ճումբ, իսկ յետոյ պարարտացնում են այդ
հողը աղբով:

Միջակ տունը ունի 20—30 քիւտտեղ հող,
չքաւորը 5—15, հարուստը 40—60, բացառիկ ու-
նեւորները և աւելի:

Քիւրան ութ կօղ է: Այդ հողով պէտք է սա-
սունցի բազմանդամ ընտանիքը կերակրվի ամբողջ
տարին և կարողանայ իր տուրքերը հատուցանել:

Սասունի հողը ըստ մեծի մասին թոյլ, ա-
ւաղախառն տեսակիցն է: Նրան հերկելը մեծ ոյժ
չէ պահանջում: Հողը առհասարակ կարմիր և դեղին
գոյն ունի, բրդական խօսքով կաւր դի: Հերկում
են 2—3 վերջօկ խորութեամբ: Այստեղ գործ չեն
ածում մեծ գութաններ: Հերկում են արօրով, որ
պահանջում է միայն մի լուծ, այսինքն մի զոյգ եղ:

Սասունի հողը դարեր շարունակ մշակութեան
մէջ լինելով, ուժասպառ է եղել և պահանջում է
մշտական պարարտացում: Վարելահողի քա-
նակութիւնը համեմատաբար մեծ չէ և այդ
հողը երբէք չէ հանգստանում, այլ անդադար
մշակվում է:

Հող պարարտացնելը յայտնի է այնտեղ ու-
ժել բառով: Ուժեղութեամբ գործ են ածում կեն-
դանիւնների աղբը: Պէտք է նկատել, որ Սասունում
փայտի առատութեան պատճառով, աղբից աթար-

ներ չեն պատրաստում վառելու համար, այլ բա-
ցառապէս նրան գործ են ածում հող ուժեղութեամբ
հա-
մար: Ամեն օր երկու անգամ գիւղացիները սըր-
բում են իրանց գոմերը և աղբը դուրս տանում
ու դիզում մի տեղ, մինչև ձմեռվայ վերջը և գա-
րունը, և յետոյ այն ժամանակ կրում են դէպի
արտերը: Եթէ ձիւնը դեռ չէ անցել, աղբը կրում
են դահուկներով դաշտ և այնտեղ թողնում մինչև
վարեյու ժամանակ. իսկ եթէ գարունը բացվել է,
այն ժամանակ կրում են կողովներով՝ բարձած
էջերի վրա: Ի հարկէ, դահուկներով կրելը աւելի
դիւրին է և արագ, Վարելու միջոցին աղբը ցըր-
վում են հողի վրա հաւասարապէս և ապա հեր-
կում հողը և ցանում: Պարարտի հաւասար տա-
րածվելուն վերջնականապէս նպաստում է ջուրը,
որով ոռոգում են դաշտերը:

Կայ հող ուժեղութեամբ և մի ուրիշ միջոց, որ նոյն-
պէս յաճախ գործ է ածվում այստեղ: Այդ այն է,
որ գիւղացին մի 20—30 օր գիշերել է տալիս իր
անասուններին այս կամ այն արտի վրա, յետոյ
տեղափոխում նրանց դէպի միւս արտը: Կենդա-
նիւնների դադարից գոյացած պարարտը այնքան
զօրութիւն է տալիս հողին, որ այլ ևս պէտք չէ
զգացվում այլ կերպ ուժեղութեամբ:

Սասունում վարելահողը և այգիները ըստ
մեծի մասին ջրվում են և այն էլ՝ մի քանի անգամ.
բուսականութեան ձման շրջանում՝ երբ չորս
և հինգ անգամ:

Այն տեղերում, ուր հողը չէ հերկվում և թող-
ված է խոտի համար, ոչ ջրում են, ոչ ուժում:

Անձրեաների խոնաւութիւնը բաւականութիւն է տալիս բոյսերի աճման:

Գիւղական հողը Սասունի գիւղերում չէ բաժանւում: Գոնէ այդ մասին դեռ խնդիր չէ ծագել այդտեղի գիւղացիների մէջ:

Տիրած հողի տարածութեան համեմատ կարգաւորւում և բաժանւում են գիւղական հարկը և տուրքերը: Գիւղերում տները իրանց կարողութեան, իրանց հողատիրութեան համեմատ բաժանւում են համփա, կէս համփա տներ:

IV

Հողագործութիւնը — հացահատիկներ՝ ցորեն, գլգել, կորեկ եւ այլն: — Իւր մասակարարող նիւթեր՝ կսաւա, պղինձի եւ մելիք — Քամբակ եւ աւուոյս: — Մրգեր: — Անասնապահութիւն՝ կով, ոչխար եւ այծ. — Կարմասնետութիւն: — Շերամապահութիւն: — Մեղուաբուծութիւն:

Գարունը հրաշալի է Սասունում:

Հողը սեւանում է Զատիկի մօտերքը: Զիւնը մնում է աւելի բարձր տեղերում, անտառներում և լեռնային խոռոչներում: Հազարաւոր գետակներ մեծ և փոքր հոսանքով տանում են ձիւնահալքի և անձրեաների ջրերը դէպի մեծ ձորերը և գետերը: Ամեն մի քայլում դուք հանդիպում էք աղբիւրների, որոնց ջրերի մասին անվերջ գովասանքներ էք լսում. — «սա պաղ է մնում, ինչպէս սառուց, ամբողջ ամառուայ ընթացքում, սա կաթնահամ է, սա զարմանալի մարսական է, սա բուժող աղ-դեցութիւն ունի»:

Արօտներ, խոտահարքներ և դաշտեր ծածկվում են հարուստ, բազմազան բուսականութեամբ: Մի տեղ գեղին ծաղիկներից ամբողջ երկիրը գեղնել է, միւս տեղ նա կարծրել է, երբորդ տեղում նա ներկայացնում է բազմերանգ ծաղիկների մի հազուագիւտ գորգ: Առատ ցողը հազարաւոր աղա-

մանդներ է թափում բոյսերի վրա և զօրաւոր կերպով նպաստում բոյսերի աճման:

Սասունի լեռնային մասերում ցանում են միայն հացահատիկներ և նրանց մէջ առաւելապէս կորէկ, գլգել: Իսկ աւելի տաք տեղերում, այն է ձորամէջերում և տափարակներում, բացի հացահատիկներից, ցանում են բամբակ, պահում են շերամի սրբ և պարապում են այդեղործութեամբ, խաղող և զանազան տեսակ մրգեր արգիւնաբերելով:

Սասունցիները հաց չեն ծախում ուրիշ տեղեր: Այնքան ցանում են, որ իրանց համար բաւականութիւն տայ: Հարեան հարեանից, գիւղ գիւղից, ի հարկէ, գնում են հաց, նայած տարվայ բերքին և հունձին. իսկ անբերրի տարիները իշնում են Մուշի դաշտ՝ այնտեղից հաց բերելու:

Երկրագործութեան մէջ այստեղ յայտնի են հետեւեալ հատիկները, հունդերը և բանջարները՝ ցորեն, գարի, կորեկ, գլգել, գիւրջգլգել, կաւարս, մուրթիկ, վազանա, կտաւատ, կանեփ, սիւսեռ, գետնախնձոր «կարտօլ» շաղգամ, կաղամբ և այլն:

Ցորեն ցանում են ամենքը, բայց քիչ քիչ: Բարձրագիւր տեղերում, օրինակ, Սեմալ, Շենըկ, Գելիեղուզան գիւղերում, ցանում են աւելի սաւաւա, քան Դաւօրիկի, Ղիանքի, Ղուլփի գիւղերում: Կորեկը պտղաբեր է և շատ է ցանվում: Գարի ամեն տեղ կայ, բայց սահմանափակ քանակութեամբ:

Գլգելը յատուկ է Սասունին և մասամբ

Մուշին: Դա ունի բարձր բուն, որի ծայրին գլխովայր կախված է կլոր, սպիտակ հատիկներով լի ողկոյզաձև մի գունդ, որ ունի շամամի մեծութիւն: Նա շատ պտղաբեր է և թէ տալիս է համեղ հաց և թէ գործ է ածվում ապուր պատրաստելու համար: Դաւօրիկում և Ղիանքում բուսնում են նրա ամենալաւ, խոշոր տեսակները: Գիւրջգլգել ասելով սասունցիները հասկանում են սիմինդրը, կամ եգիպտացորենը. դա այնքան տաւածված չէ:

Կաւարս, մուրթիկ և վազանա տաւածված են ոչ հաւասարապէս: Ամենից շատ տաւածված է կաւարսը, այնուհետև վազանան (Ղիանքում շատ են ցանում), իսկ ամենից քիչ՝ մուրթիկը: Այդ հատիկներից ամենախոշորն է կաւարսը, ամենամանրը վազանան, որ ունի սպիտակ կորեկի նման հատիկներ:

Այն հողը, ուր պէտք է ցորեն ցանվի, հերկում են կամ, ինչպէս սասունցիները ասում են, փեշխում են մի անգամ, իսկ կորեկի տեղը չորս անգամ: Ցորենի արտը ցաքում են ցանելուց յետոյ, իսկ կորեկինը՝ նախ ցաքով հաւասարեցնում են հողը և ապա ցանում:

Բերրիութեան, կամ հունձի առատութեան աստիճանը մերձաւորապէս այս տեսակ է. ցորենը տալիս է մէկին 10—15, գարին 5—10, գլգելը 200—400, կորեկը 60—100, կաւարսը 300—500, մուրթիկը 150—200, վազանան 70—100, կտաւատը 8—15, կանեփը 70—100:

Կտաւատից ձէթ են պատրաստում տան

գործածութեան համար: Կանեփը քիչ է ցանվում, Կտաւատի թիւը գործ չէ անվում. բայց կանեփի բունից պատրաստում են չուաններ տնային պէտքերի համար: Շատ յարգված է Սասունում և ընկոյզի իւղը, որ արդիւնաբերվում է բաւականաչափ: Ձէթ պատրաստում են և պղինձքի ծառի պտուղներից (հատերից), լաւ ծեծելուց և քամելուց յետ: Պղինձքից պատրաստում են նաև առանձին կերակուր:

Ի դէպ, կարելի է յիշել, որ անտառներում և արտերի մօտ բուսնում է մըկիթ (շանգիլ) ծառը, որի սեւ, տափակ պտուղները պարունակում են իրանց մէջ մեծ քանակութեամբ ձէթ: Այդ ձէթը ուտելու համար գործածական չէ. բայց նա պէտք է գալիս տեղական ս ա պ օ ն շինելու համար:

Բոյսերը ցանելու ժամանակ աշխատում են փոքր ի շատէ փոփոխել նրանց տեղը: Յորենից յետոյ ցանում են կորեկ, նրանից յետոյ դարձեալ ցորեն, կամ մի այլ հացաբոյս: Միայն անջրդի բարձրագիւր տեղերում յաճախ ցանում են միմեանց վրա միայն գարի:

Բամբակ ցանում են Ղիանքի և Ղուլփի գիւղերում, որտեղ նա բուսնում է աջող կերպով: Մի քանի անգամ փորձեցին բամբակ ցանել և Գեղիեգուզան գիւղում և ունեցան լաւ հետեւանքներ, բայց բամբակի մշակութեան յարմար հողեր շատ չը կան այդ գիւղում:

Սոտաբոյսերից յայտնի է այնտեղ առւոյսը, որ ցանվում է բոլոր գիւղերում, բայց ոչ մեծ բանակութեամբ. իւրաքանչիւր մարդ աշխա-

տում է մի կամ երկու արտ առւոյս ունենալ: Առւոյսը մի և նոյն տեղում անընդհատ բուսնում է 7—10 տարի: Առւոյսի քիչ ցանելու պատճառը այն է, որ նրա համար պահանջվող պետական հարկը ծանր է: Այն ինչ հացաբոյսերի համար նշանակված է վերցնել վեց խուրձից մէկը. առւոյսի համար վերցվում է 30 խուրձից 100 դուռը, որ գիւղացիների համար ծանր է վճարել:

Խաղող չը կայ Շատախի գիւղերում. բայց կայ Դալօրիկում և մանաւանդ Ղիանքում: Փառագա գիւղի խաղողը մեծ ողկոյզներ ունի, պտուղները սղմուկ, մի ճուլթը դժուարութեամբ մի մարդ ուտում է: Գինին պարունակում է իր մէջ շատ ոգելից նիւթ, և շուտ հարբեցնում է:

Մըգատու ծառեր տարածված են բոլոր այն տեղերում, ուր կան և խաղողի այգիներ: Հեղին գիւղը մանաւանդ յայտնի է իր դանազան տեսակ մրգերով. այդտեղ աջող կերպով բուսնում են թուզ, տանձ, խնձոր, ծիրան, թութ, պղինձք և ուրիշ տեսակ ծառեր: Գիւղացիները պատրաստում են պաստեղ, ուռփ, չամիչ, օղի:

Անցնենք այժմ տաւարապահութեան, որ Սասունի գիւղերի տնտեսութեան մի շատ նըշանաւոր ձիւղն է կազմում, իսկ լեռնային մասում աւելի մեծ տեղ է բռնում, քան նոյն իսկ հողագործութիւնը:

Տնային անասուններից պահում են կով, եզ, ոչխար, այծ, ձի, ջորի, էշ, որոնք ծառայում են տնային պիտոյքներ հոգալու, մատակարարելով

միս, կաթ, իւղ, բուրդ, իսկ ոչխարը բացի դրանից վաճառահանվում է և դրամական եկամուտի գլխաւոր աղբիւրն է կազմում:

Այստեղի կ ո վ ե բ ը միջին և փոքր հասակի են, ըստ մեծի մասին սև գոյնով և աւելի սակաւ՝ կարմիր գոյնով: Կովը միջին հաշւով ունի 8—10 լիտր միս: Իւրաքանչիւր միջին տուն պահում է 5—10 կով, աւելի չքաւորները 2—3, իսկ հարուստները 15—20 և աւելի կով: Մի կով ամառվայ ընթացքում տալիս է մինչև 2 լիտր իւղ:

Եզը ծառայում է երկրագործական աշխատանքների և բեռներ կրելու համար: Միջին տունը պահում է 6—10, չքաւորը 2—4, հարուստը 30—40 եզ և աւելի,

Թէ կովը և թէ եզը մօտ վեց ամիս կերակրվում են տանը փակված: Նրանք ստանում են առաւօտեան էրթ (յարդ, դարման), ճաշին՝ խոտ և երեկոյեան՝ կաղ: Կովերին կաղ քիչ են տալիս, իսկ եզներին մինչև 1—2 լիտր իւրաքանչիւրին:

Ոչխարը ամենասիրելի կենդանին է լեռնական սասունցու համար: Ոչխար ասելով՝ նա յաճախ հասկանում է ոչխար և այժ միասին, իսկ զանազանելու համար նա անուանում է առաջինին մաքի, իսկ երկրորդին այժ, կամ առաջինին սպիտակ ոչխար, իսկ երկրորդին սև ոչխար: Մենք գործ կածենք այնպէս, ինչպէս սովորաբար ընդունված է, ոչխար և այժ բառերով:

Ոչխարը և այժը աւելի բազմատեսակ արդիւնք են տալիս և աւելի լաւ են վաճառվում, քան միւս անասունները: Սասունի լեւներում

ծախու ոչխարներից կազմվում են մեծ հօտեր, որոնց յետոյ տանում են վաճառելու Դիարբեքի, Հալէբ և Շամ:

Ոչխար և այժ պահում է ամեն մարդ: Միջին տունը ունի մերձաւորապէս 200 գլուխ, ամենաչքաւորը աշխատում է մի 50 գլուխ ունենալ, իսկ հարուստները կարողանում են պահել ամբողջ հօտեր, բաղկացած 500—700 և մինչև անգամ 1000 գլուխ ոչխարից և այժից:

Սասունի շուրջ գտնվող սարերում քիւրդերը բերում են արածացնելու իրանց հօտերը, իսկ ձմեռը նրանք չլուծ են և դնում հեռաւոր տափարակները, ներքին գաշտերը, որտեղ ձմեռը խիստ չէ և կարելի է ոչխար պահել առանց հընձած խոտի, կամ քիչ խոտով, բաւականաչափով ձմերային արօտներով: Հայերը ֆնում են իրանց գիւղերում և կերակրում են խոտով, բայց գլխաւորապէս ծառերի (հօշի, լօղփի և այլն) տերեւներով, մերձաւորապէս մի մասը խոտ և երկու մասը տերեւ հաշուելով: Հարիւր ոչխարը ստանում են հարիւր բարդ տերեւ, ըստ որում ամեն մի բարդը բաղկացած է լինում երեսուն մեծ խուրձից, որոնցից իւրաքանչիւրը հաղիւ կարող է մի մարդու շալակ կազմել: Ոչխարին համեմատաբար խոտ շատ են տալիս, իսկ այժին տերեւ:

Հայերը աւելի լաւ են խնամում ոչխարին, քան քիւրդերը: Այդ պատճառով, երբ ոչխարը լցար է, վախտ, ասում են «կարծես քիւրդի ոչխար է»:

Ոչխարը սպիտակամաղ է, այժը սևամաղ,

Ոչխարին խուզում են երկու անգամ, իսկ այծին մի անգամ: Ոչխարի բուրդը կակուղ է, այծի մազը կօշուտ: Կակուղ մազ ունեցող այծեր այս տեղերքը չը կան և չեն էլ բերում Սլիվանից, Մուշի կողմերից, ուր կան տեղ տեղ: Սասունցիները գնահատում են ոչխարի՝ բուրդը, իսկ այծի՝ կաթը: Այծը ծախվում է լաւ գնով, ուստի նա սիրելի կենդանի է Սասունում:

Ոչխարը պարունակում է իր մէջ 4, երբեմն մինչև 5 լիտր միս: Այստեղի ոչխարը ունի երկար դմակ, որ քաշում է մինչև մի լիտր և աւելի, օրինակ, 20 նուկի: Մի լիտրը 12 նուկի է, մօտ 17 գրվանքայ (ֆունտ):

Ոչխարը տալիս է 1—2 նուկի բուրդ, 6—10 նուկի իւղ և բաւական քանակութեամբ պանիր: Թէ ոչխարը և թէ այծը կթվում են օրեկան երկու անգամ՝ կէսօրին և երեկոյեան: Այծը շատ կաթնատու է. համարեա երկպատիկ աւելի կաթ է տալիս, քան ոչխարը:

Ոչխարի ծինը միաժամանակ չէ կատարվում. նա սկսվում է բարեկենդանից և մինչև անգամ աւելի վաղ և շարունակվում է մի քանի շաբաթ: Այստեղ սովորութիւն չը կայ աշնանը դճերին բաժանել ոչխարից և յետոյ մի որոշ ժամանակ խառնել միասին:

Քանի գեռ կանաչ խոտը լեռնային արօտներում այնքան չէ զօրացել, որ կարելի լինի հօտերը այնտեղ ուղարկել կերակրվելու, ոչխարներն չեն կրթում, այլ բոլոր կաթը թողնում են գառների համար: Կթելը սկսվում է զօլան (մայիս) ամսից:

Կաթը եփում են և մածուն շինում: Մածունի երեսը, իւղային մասը, շատ անգամ ժողովում են առանձին, աղում, լցնում կարասներ և այդպէս պահում մինչև խոր ձմեռը, երբ նրան ուտում են: Կարասների բերանը փակում են և նրանց գլուխը բերանը վայր՝ պահում չոր տեղում՝ թաղած հողի մէջ: Նոյն ձևով պահում են յաճախ և անքաշ մածունը, քամած և աղած: Թանից պատրաստում են կամ ժաժիկ, որ այստեղ անուանվում է թանհատ և պահվում է աղած, կամ էփած թան, որ կամ ուտվում է իսկոյն, կամ նոյնպէս աղվում է ու կարասների մէջ պահվում և գործ է ածվում ձմեռը ապուր շինելու համար: Այդ եփած թանը թանձր հեղուկ է մաթի նման: Զիւ կամ թել պանիր Սասունում չէ պատրաստվում: Քիւրդերի մէջ շատերը կաթի երեսը չեն առնում և պատրաստում են մեծ գլուխ պանիրներ՝ 1—2 լիտր ծանրութեամբ: Երբ լեռներից իջնում են քիւրդերը, կտրտում են այդ պանիրը և կտորներով պահում աղաջրի մէջ առանձին կարասներում:

Սասունցիները պանիր չեն ծախում երբեք: Իսկ իւղը կարողանում են արտահանել մի յայտնի քանակութեամբ: Բուրդը մեր մասամբ գործ է դրվում ընտանեկան պիտոյքների համար: Բացի հագուստից, որի վրա գործ են ածում բուրդը, սասունցի կանայք պատրաստում են կարպետներ, փալաններ, թաղիքներ, չուախներ և երբեմն գորգեր: Այս վերջինները ըստ մեծի մասին տարածված են քիւրդերի մէջ:

Ուրիշ կենդանիներ Սասունում քիչ են գործ

ածվում: Գոմէշ ամենեւին չը կայ լեռնային գիւղերում: Երբեմն Մուշի կողմերից բերվում են փորձի համար գոմէշներ և պահվում են հարուստ տներում: Խոզ ամենեւին չը կայ Սասունում, թէև նա կարող էր բաւական յարմարութիւն գտնել իր համար Սասունի անտառներում, ուր կաղին կայ մեծ քանակութեամբ:

Ձի և ջորի կան միայն մի քանի հարուստ տներում: Ձին աւելի հազուագիւտ է, քան ջորին, որ աւելի է յարմարվում Սասունի քարոտ տեղերին:

Համարեա իւրաքանչիւր տուն պահում է մի կամ երկու էշ, որ գործ են ածում բոն կրելու, ջազացը ցորեն և ուրիշ հացահատիկներ տանելու, ալիւր և աղ կրելու: Հարուստ տներում պատահում են մինչեւ երեք և աւելի էշ պահողներ:

Շեք ա մ ա պ ա հ ու թ իւնը տարածված է Ղուփի և Ղիանքի շատ գիւղերում, օրինակ Իշխընձորում, Արտգունքում, Փառգայում: Մարդ կայ, որ մինչև 100 լիտր շերամ է դուրս բերում տարեկան: Շեքամի սերմը իրանց երկրումն են հանում, ուրիշ տեղերից չեն ստանում: Մի քանի տարի առաջ մի պօլսեցի, Միհրան էֆէնդի, եկել էր Սասունի կողմերը և վաճառելու համար սերմեր էր պատրաստում, ջոկելով ընտիրները տկարներից, բայց նրա վրա ծուռ նայեց թիւրք կառավարութիւնը և նրան կալանաւորեց ու յետ ուղարկեց:

Մեղուաբուծութիւնը յայտնի է Սա-

սունի բոլոր մասերում, մանաւանդ Դաւօրիկի գիւղերում: Փեթակների թիւը ամբողջ երկրում հաշվում են մի քանի տասնեակ հազարներ: Գելիեգուզանի մէջ յայտնի հարուստ Պետոյի տանը շատ փեթակներ են եղել միշտ: Առաջին կոտորածի ժամանակ, երբ գելիեգուզանցիները, երկար մաքառումից յետոյ՝ թնդանօթների գնդակներից փախան լեռները, ազահ թիւրք գինւորները՝ երբ մտան Գելիեգուզան գիւղը, շտապեցին Պետոյի տունը և ընկան մեղրի վրա, բայց այնքան շատ կերան միանգամից, որ մի քանիսը սաստիկ հիււանդացան և ասում են, որ նոյն իսկ մեռան: Այն ժամանակ կասկած ընկաւ թիւրքերի մէջ, որ մեղրը իբր թէ թունաւորված է եղել: Այդ պատճառով կրակ տուին մեղրի ամբողջ պահեստը: Մեղրը հալվում էր և հոսում ձորակողով դէպի ջուրը:

V.

Ընդհանուր ակնարկ Սասունի վրա:—Սասունը եին ժամանակ-
ներում:—Վարչական եւ տնտեսական, արտաքին եւ ներքին փո-
փոխութիւններ:—Սասունցիների ծանր եւ վրդոված դրութիւնը
աղէկից առաջ:—Վերջապահ:

Մենք ներկայացրինք ընթերցողին այն պայ-
մանները եւ հանգամանքները, որոնց մէջ ապրում
է Սասունի ժողովուրդը: Մենք տեսանք, որ մի
լեռնոտ, խորտուրտ երկիր, անթիւ ժալեհրով,
ձորերով եւ կիրճերով, որի մէջ չը կան ընդարձակ
դաշտեր երկրագործութեան համար, կարողացել
է սքանչելի կերպով շէնանալ եւ ապրուստ տալ
հազարաւոր ընտանիքների: Եւ դա շնորհիւ այն
բանի, որ այդ լեռների եւ ժայռերի կրճերն կաած
կապւած է մի աշխատասէր, խնայող ժողովուրդ,
որ մի անգամ ընտրել է իր համար այդ երկիրը,
այնտեղ բուն է դրել եւ այլ եւս նրանից չէ բա-
ժանվել ամբողջ դարեր, շարունակելով նրան շէ-
նացնել եւ ընդարձակել:

Սասունը իր մէջ պարունակում է բնութեան
հարստութիւններ, որոնց ձեռք բերելը, մարդ-
կային ապրուստին ծառայեցնելը՝ ըստ մեծի մտ-
տին կատարվում է միայն աշխատանքով եւ
այն էլ՝ մեծ, աննկարագրելի ծանր աշխատանքով:

Սասունը առանց իր աշխատաւոր ձեռքերի ոչինչ
է: Աշխատանքն է, որ այդ բոլորը ստեղծել է:
Եւ դա մի այնպիսի աշխատանք է, որ մի ան-
գամ գործադրվեց ու վերջացաւ. դա մի տաճար,
մի կամուրջ, մի բուրգ շինել է, որ մի անգամ
կատարվեց եւ երկար տարիների համար ծառայեց:
Դա մշտական, տոկուն գործունէութիւն է, ան-
քուն հսկողութիւն, անդադար խնամք, որոնց
պակասութեան, որոնց բացակայութեան միջո-
ցին — կորչում է այդ երկրի բազմազան արդիւ-
նաբերութիւնը:

Դեռ շատ հին ժամանակներում, դեռ հազար
տարի սրանից առաջ սասունցիները մշակում էին
այդ երկիրը եւ յարմարեցրել էին իրանց կենցա-
ղավարութիւնը երկրի պայմաններին եւ առանձ-
նայատկութիւններին: Պատմագիր Թովմա Արծ-
ժրունին, որը կարողացել է մօտից ծանօթանալ
սասունցիներին եւ նոյն իսկ ակնանտես լինել
շատ եղելութիւնների, հետեւեալ կերպով է նկա-
րագրում լեռնային այդ երկիրը եւ նրա ժողովուրդը:

«Այստեղ քիչ խօսքով բացայայտեմ լեռան
բնակիչների որպիսութիւնը, թէ որտեղից եւ ինչ
տեսակ մարդիկ են եւ ինչպիսի աշխատութեամբ
եւ սաստիկ տառապանքներով են նրանք հայթայ-
թում իրանց ապրուստի կարևոր պէտքերը: Նրանց
բնակութիւնը հաստատված է ձորերի խորքերում,
լեռների փապարներում, անտառների մէջ եւ սա-
բերի գազաթներին: Նրանք բնակվում են ազգ-
ազգ առանձին եւ այնքան հեռու են միմեանցից,
որ եթէ զօրաւոր մարդու մէկը բարձրաբերձ տե-

ղերից ուժգին ձայնով գոռայ, հազիւ թէ որ և է տեղում կարողանայ լսելի լինել, այն էլ իբրեւ մի արձագանք ժայռերի միջից: Նրանց կէսը շեղվել է հայրենի լեզուից՝ հեռու ապրելու պատճառով և միմեանց հետ հանդիպած ժամանակ՝ խորթանում են մէկը միւսից և խօսում են իրար հետ աղքատ, կարկառուն խօսքերով: Եւ պատահում է, որ այնքան սաստիկ անձանթ ու օտար են լինում միմեանց, որ նոյն իսկ թարգմանների կարօտութիւն են զգում: Իրանց կերակուրը պատրաստում են նրանք զանազան սերմերից, առաւելապէս կորեկ կոչված սերմից, որին սով ժամանակներում ունեն հացի անուն են տալիս: Սերմը ցանում են անտառների մէջերքում, խընամքով ջրելով և երկմատնեայ փայտատներով փորելով հողը:

«Մերկութիւնը ծածկելու համար նրանք գործ են ածում բրդեայ զգեստ, իսկ ոտներին հագնելու համար այծի մորթից շինում են կօշիկների նման մի բան:

«Ամառ ձմեռ նրանք բաւականանում են միատեսակ կերակրով և միատեսակ հագուստով: Նրանք մշտական կրում են իրանց վրա զէնք, որ բաղկացած է նիզակից և որը նրանք միշտ պատրաստ պահում են անտառների, լեռների զազաններից և յարձակվող թշնամիներից պաշտպանվելու համար:

«Այն դէպքերում, երբ թշնամին յարձակվում է նրանց երկրի վրա, լեռնականները միաբան գալիս են իրանց իշխանների օգնութեան, որով-

հետեւ տիրասէր են:

«Ամպերից եկած ձիւների փութը մակերեւոյթի վրա ման գալու հնարաւորութիւն ունենալու համար՝ նրանք ոտներից կապում են չուաններով առանձին տեսակ փայտեայ քօշեր և դիւրութեամբ ընթանում են ձիւնի վրայով, ինչպէս ցամաք հողի վրայով:

«Նրանք զազանաբարոյ են, արիւնարբու. նրանք ոչինչ են համարում հարազատ եղբայրների կամ իրանց անձի սպանելը: Նրանք կոչվում են մեկն ազէն սուրհանդակներ և ապրում են Աղձնիքի ու Տարօնի մէջ եղած սարերում:

«Իրանց խառն և անհետազօտելի լեզուի և բարքի պատճառով նրանք Խութ են կոչվում, որտեղից և սարի անունը Խոյթ է: Նրանք գիտեն սաղմոսներ հայ վարդապետների հին թարգմանութիւններից, որ միշտ գործ են ածում անգիր:

«Սրանք այն մարդիկն են, որոնք Ասորեստանի և Նինուէի Սենեքերիմ թագաւորի որդի Սանասարի և Աղբամեից յետոյ չուեցին եկան և որոնք իրանց անուանում են տէրերի անունով սանասնեաներ: Նրանք հիւրասէր են, օտարների ընդունող, պատիւ տուող և պահող»:

Թովմա Արծրունին, որ տալիս է այս տեղեկութիւնները, պատմում է, որ Հայկական Յ կամ Փրկչական 851 թուականին, ուրեմն 1053 տարի սրանից առաջ, սասունցիները իրանց զարմանալի քաջութեամբ և համարձակ արշաւանքով կարողացան փախցնել թշնամիներին և ազատել երկիրը օտարի լուծից:

Այդ ժամանակ տաճիկների զօրավարը խաբէութեամբ և անգթութեամբ կարողացել էր իր ձեռքը գցել Մուշի դաշտը և սպասում էր, որ ձմեռը վերջանալուն պէս՝ արշաւի Սասունի լեռնականների վրա և նրանց ընկճի: Բայց սասունցիները սպասել չը տուին զօրավարին: Իրանք, ձմեռվայ միջում, արագ շարժվելով ձիւների վրայով, յանկարծակի յարձակվեցին թիւրքերի վրա, նրանց կոտորեցին, այս ու այն կողմ փախցրին և հալ բանդարկեալներին ազատեցին: Տաճիկների զօրավարը փախաւ Բագարատի շինած հոյակապ մեծ եկեղեցին և թագնվեց գմբէթի մօտ: Սասունցի մեկնազէնները պատեցին եկեղեցին և նիզակով սպանեցին զօրավարին:

Եւ Սասունի հայը դարերի ընթացքում ֆնաց հաւատարիմ իրան: Մի կողմից նա քրտինքի մէջ կորած մի խղճուկ ուսմիկ մշակ էր, որ բերում էր իր լեռների շերտերը՝ օրական հաց հայթայթելու իր համեստ և նոյն իսկ աղքատիկ ապրուստի համար, նա բնութեան կատաղի կապանքների մէջ շղթայված մի փոքր ժողովուրդ էր, որ իր կեանքի համար շատ բան չէր պահանջում և յոյս էլ չէր կարող ունենալ բազմահարուստ կենցաղավարութեան համար. սակայն միւս կողմից նա հպարտ, յանդուգն, անվեհեր, անյողդողդ մի ոյժ էր, երբ խնդիրը գալիս էր նրա բարոյական յարաբերութիւններին դէպի դրսի աշխարհը, նրա ոգու անկախութեան, նրա իրաւունքների սահմանափակման կամ ջլատման խնդրին:

Նա, որ բնութեան փայփայանքը և շոյան-

քը ստացողներից չէ, նա, որին բնութիւնը երես չէ տուել երբէք, նա, որին սղմել ու ճնշել է և՛ հայրենի սրածայր ժայռը և՛ նեղ ձորերի խորխորատը, նա չէ կամեցել մարդկային կապանքներ ևս դնել իր վրա և ծառայեցրել է իր հայրենիքի անմերձենալի բարձրաբերձ լեռները և դժուար մշակելի վայրերը իր դարաւոր իրաւունքների պաշտպանութեան համար:

Սակայն նրան շրջապատող արտաքին պայմանները, որոնք առհասարակ նպաստաւոր չէին, վերջին ժամանակներս ենթարկվեցին որոշ ծրագիրներին ծառայող փոփոխութիւնների: Նրանք ձգտում էին այնպիսի կապանքներ ստեղծել, այնպիսի պարիսպներ կանգնեցնել, որ լեռնական այդ ժողովուրդը վերջնականապէս ընկճվի և մոռանայ մարդկային իրաւունքների անխախտութեան մասին իր ունեցած հին երազները:

Այդ արտաքին փոփոխութիւնները կատարվում էին մեծ տարածութեան վրա կամաց-կամաց և զանազան ձևերով: Եւ նրանց միայն մի ալիքը հասաւ Սասուն:

Եթէ Սասունի և առհասարակ թիւրքա-հայաստանի ազգութիւնների և կրօնական համայնքների մէջ չը կար առաջ գիտակցական եղբայրութեան, քաղաքացիական միասնակեցութեան գաղափար, սակայն կար հարեանակաւ, իսկ երեմի նոյն իսկ մտերմական զգացմունք: Դիւրդերը հայերի հետ շատ տեղ կարողացել են երկար ժամանակներ ապրել հաշտ ու հանդարտ, մեղմացնելով և մոռացման տալով այն խորթութիւ-

նը, որ կար միմեանցից տարբեր տարրերի մէջ։
Բայց այդ գրութիւնը դուր չեկաւ զիպլօմատ
կառավարիչներին, որոնք իրանց օրհասական խե-
լացնորութեան մէջ սկսեցին յղանալ յանցաւոր
ծրագիրները արթնացնելու մահմեդական տարրերը,
ջնջել այն ազգութիւնները և համայնքները, որոնք
չէին կարող նպաստել համամահմեդական ձուլման
գաղափարին և նոյն իսկ կարող էին նրան խան-
գարող հանդիսանալ։

Եւ ահա սկսվում է մի՛ երբեմն խուլ, երբեմն
բացարձակ՝ յանցաւոր գործունէութիւն այդ ուղ-
ղութեամբ։ Ուղարկվում են քարոզիչներ, որոնք
ամեն ճիգ են թափում ֆանատիկ օսացնել
մահմեդական ժողովուրդը, որոնք հրաւիրում են
նոյն իսկ հեռաւոր տեղերի մահմեդականներին՝
չերքեզներին, չեչեններին, լեզլիներին գալ լցնել
Փոքր-Ասիայի ազատ տեղերը՝ մահմեդական մի
մեծ աշխարհ ստեղծելու համար։ Կազմվեց համի-
դիէի վայրենի գունդերի զինւորութիւնը, որ մի
սարսափելի նեցուկ դարձաւ տեղական աստան-
դականների վայրենի գործողութիւնների և գաղա-
նային արարքների համար։

Թիւրք կառավարիչը, քիւրդ աղան, տեղա-
կան պաշտօնեան սկսեցին դառնալ ծայրայեղ
բժախ դիր գէպի քրիտոնեան, խստապա-
հան զէպի հնազանդութեան արտաքին արտա-
յայտութիւնները և սարսափելի կասկածոտ
գէպի ամեն մի գործ, ամեն մի երեոյթ, որ կը-
րում էր իր մէջ բարձր կուլտուրականութեան
նշան։ Ամեն տեղ գտնում էին անհնազանդութիւն,

յիղափոխական եթէ ոչ գործունէութիւն, գոնէ
մտածողութեան հետքեր։ Ի դուր տեղը՝ բռնում
էին աչքի ընկնող մարդկանց, ինտելիգենտ ան-
ձերին, քահանաներին, ապարդիւն հարց ու փո-
ձի էին ենթարկում և բանտարկում նրանց և դրա-
նով միայն վշտացնում ու յուսահատեցնում հայ
ժողովրդին և նրան թշնամացնում էին այն ազ-
գութիւնների հետ, որոնց հետ, լաւ թէ վատ,
բայց մի կերպ հաշտ ապրել է նա երկար ժա-
մանակներ։

Իրբն հետեանք այդ բոլոր գործողութիւն-
ների և քարոզների՝ առաջ եկաւ այն անբնական,
լարված գրութիւնը, որ տիրել էր Սասունի եր-
կրին կոտորածից առաջ, և այն թշնամութիւնը,
որ ընկաւ զանազան ազգութիւնների և դաւա-
նութիւնների մէջ։ Քիւրդը իր ընդհարումներ
մէջ դարձաւ կատաղի և, նրա գործողութիւնների
մէջ սկսեցին արտայայտվել դաւադրական նախա-
պատրաստութիւններ և ռիսակալ թշնամութիւն։

Սասունցին սովոր էր աւելորդ բժախդրու-
թիւններին։ Նա չը գիտէր՝ թէ ինչ գաղտնի մե-
քենայութիւններ են յօրինվում նրա դէմ. նա միայն
տեսնում էր, որ թէ քիւրդը, թէ թիւրք կառա-
վարիչը առաջվանից աւելի կոպիտ են և աւելի յան-
դուգն իր հետ։

Սասունցին առաջվայ պէս պաշտպանում էր
իրան, որքան նա կարող էր։ Յարձակումներին
պատասխանում էր յարձակումներով, մահալին
մահակով, սրին սրով, հրացանին հրացանով։

Սասունցին վերջապէս սկսեց կամաց-կամաց

նկատել, որ նրա շուրջը փոփոխութիւններ են առաջ եկել: Նա տեսաւ, որ նրա հարեանքիւրդերը գաղտնապահ են դարձել, որ նրանք հրաւիրվում են առանձին ժողովներ: Նա նկատեց, որ քիւրդը թոյլ է տալիս իրան տմարդի վարձուներներ, նա մարդութիւն, դիմելով իր հասարակ ընդհարումներին միջոցին տեղական իշխանութեան օգնութեանը:

Եւ որ բոլորովին օտարոտի երևոյթ էր տեղական ժողովրդի համար, հարեան ազգութիւնների մէջ տեղի ունեցող ընդհարումներին յանկարծ սկսեցին տեղական իշխանութիւնները տալ մի ուրիշ, առանձին նշանակութիւն. սովորական ընդհարումը վերածվեց քաղաքական խնդրի, հովիւներին քաջ ինքնապաշտպանութիւնը նկատվեց իբրեւ ըմբոստութեան արտայայտութիւն, իբրեւ ապստամբական շարժման մի յայտարար: Իսկ քիւրդերի անկարգութիւնները և յափշտակութիւնները սկսեցին աւելի ևս խրախուսվել, իբրեւ օրինաւոր, տեղական իշխանութեան շահերին նպաստաւոր գործողութիւններ:

Բայց Սասունի ժողովուրդը մտքով չէր անցկացնում մի բոլոր, որ կենտրոնական կառավարութիւնը, թիւրքաց մայրաքաղաքի ատենաները համակրում են տեղական կառավարիչների այդ ընթացքին, այլ նա բացատրում էր այդ բոլորը կառավարիչների կամայականութեամբ միայն:

Սակայն գործերի վիճակը շատ էր վատթարանում և ժողովրդի դրութիւնը անտանելի էր դառնում:

Սասունի ժողովուրդը, որ ամենամեծ նեղութիւններով հայթայթում էր իր օրական ապրուստը, սկսեց ենթարկվել խիստ պահանջների: Նրանից հարկ էին պահանջում և կառավարութիւնը և քիւրդ աղաները, և այն՝ օրստօրէ աւելի ու աւելի խստութեամբ: Սասունցին, որ ապրում էր սահմանափակ հողում, որ իր տնային տնտեսութեան մէջ ծայրը ծայրին հասցնում էր իր մեծ խնայողութեամբ և սակաւապետութեամբ, որ ծանր հանգամանքներից ստիպված սկսել էր այդ խուլ աշխարհը նոյն իսկ մի քանի պանդուխտներ դուրս բերել դէպի քաղաքներ, այդ տնտեսապէս նեղված ժողովուրդը ենթարկվում է նոր հարկերի, նոր տուրքերի: Այդ արդէն չափազանց էր կամ, ինչպէս սասունցիները ասում են, երկիրը այլ ևս համբերել չէր կարող *)

Սասունի ժողովուրդը սկսեց անհանգստանալ: Գիւղի մեծերը, գիւղի հոգատարները ժողովում էին, խօսում էին, ասում, վիճում, բայց ոչ մի ելք չէին կարողանում գտնել: Նրանք փորձում էին հասկացնել քիւրդերին և կառավարիչներին, որ իրանք նեղ վիճակի մէջ են, որ իրանց երկիրը անկարող է այնքան ծանրութիւն տանել, որքան նրա վրա դնում են, բայց նրանց պատասխանում էին շատ կոպիտ և անողորմ ոճով:

*) Յ. Մ. «Մշակի» № 8, 9 (1895) առանձին ուսումնասիրութեան մէջ արդէն ներկայացրել է Սասունի տնտեսական պայմանների փոփոխութեան էութիւնը և պարզել այն նեղ վիճակը, որի մէջ ապրում է Սասունի ժողովուրդը:

Սասունի գիւղերի ներկայացուցիչները միմեանց հետ տեսակցութիւններ կազմեցին խորհելու, թէ ինչ միջոցներ որոնեն, որ հեռացնեն իրանցից նորանոր բարդվող տուրքերը: Երկար վէճերից, բազմապատիկ խորհրդակցութիւններից յետոյ եկան այն եզրակացութեան, որ աւելորդ պահանջներին նրանք չը պէտք է են թարկվեն, որ պէտք է կանօնաւորապէս որոշվեն նըրանց պարտաւորութիւնները և վերջ գրվի երկուստեք հարկատուութեանը՝ և կառավարութեան, և քիւրդ աղաներին:

Սակայն նրանց այդ տեսակ առաջադրութիւնները նկատվեցին իբրև ըմբոստութեան նըշան, իբրև անհնազանդութեան արտայայտութիւն: Թիւրքերը սկսեցին իրանց պահանջները խստացնել և մի և նոյն ժամանակ փորձեցին մեղադրել ժողովրդին, որ նա չէ կամենում կատարել իր պարտաւորութիւնները, դրդված լինելով կողմնակի ազդեցութիւնից: Բայց այդպիսի մեղադրանքների համար ապացոյցներ չը կային:

Բանը այնպէս փոխվեց, սակայն, որ թիւրքերի ձեռքին շուտով ապացոյցների նման փաստեր էլ երևացին, Քիւրդ լրտեսները յայտնեցին տեղական թիւրք իշխանութեան, թէ Սասունի գիւղերի շրջանում նրանք տեսել են մի օտար մարդու, որ յաճախ շփվում է ժողովրդի հետ: Կառավարութիւնը լրտեսների միջոցով աշխատեց ճիշտ տեղեկութիւններ ժողովել, թէ որտեղ է գտնվում այդ օտար մարդը, և 1893 թւի մայիսի 1-ի օրը, յանկարծ ոստիկաններով պատեց այն

տեղը, ուր այդ ժամանակ լինում էր կասկածելի անձը և ձերբակալեց նրան: Այդ անձը Դամադեանն էր, որ բանտարկվեց, յետոյ տեղափոխվեց Կ. Պօլիս և այնտեղ արձակվեց:

Դամադեանի կալանաւորելը համարելով միշտ զօրաւոր ապացոյց, տեղական թիւրք իշխանութիւնը սկսեց գործել ամենամեծ համարձակութեամբ: Նա պահանջեց սասունցիներից, որ նրանք յանձնեն իշխանութեանը երկրում գըտնվող բոլոր կասկածելի, մտքեր յուզող անձերին, և երբ դրա պատասխանը բացասական եղաւ, նա առաջարկեց, որ գիւղական մեծամեծները, նշանաւոր համիա մարդիկ, իշխանները գան նահանգապետի մօտ բացատրութիւնների համար: Սասունցիները, որ արդէն ունեցել էին ապացոյցներ թիւրք կառավարիչների խոստմնազանցութեան, կասկածով վերաբերվեցին իշխանութեան դիտաւորութիւններին և չը գնացին ներկայանալու:

Իսկ այդ միջոցներում կարծես դիտմամբ քիւրդերը արդար թէ անարդար կռիւներ էին գըցում հայ հովիւների հետ: Հայերը մի երկու անգամ թեթև դիմադրեցին. բայց քիւրդերը չընկճվեցին և մինչև անգամ կարեոր համարեցին ընդհանուր աշիրաթական կոչ հանել, հաւար կանչել, միասին ժողովվել կուելու համար: Հայ հովիւներն էլ օգնականներ վերցրին իրանց հետ և քիւրդերին դիմադրեցին այնպիսի ուժգնութեամբ, որ քիւրդերը թողին բազմաթիւ վիրաւորված ու սպանվածներ և ամօթապարտ յետքաշվեցին: Քիւրդերի համար այդ ջարդը անսպա-

սելի էր, որովհետև իրանք փոքր ի շատէ պատ-
րաստված էին: Նրանք այդ ժամանակ յայտարա-
րեցին, որ հայերը վաղօրօք կազմակերպված են
եղել, որ նրանք պատրաստութիւններ են տեսել
քիւրդերին ջարդելու: Տեղական իշխանութիւնը,
որ թելադրել էր քիւրդերին այդ տեսակ ենթա-
դրութիւններ, այժմ լսելով քիւրդերից նոյնը,
տեսնում էր իր ջանքերը պատկա՞ծ քիւրդի և
հայի մէջ սկսված թշնամական զգացմունքը այն-
քան զարգացած, որ նա կարող էր արդէն աւելի
վճռական քայլեր անելու և քիւրդերի հետ միա-
սին՝ հայերին ջնջելու ծրագիրներ մշակելու:

1893-ի աշունը ծանր տպաւորութիւնների
տակ սկսվեց: Հայերը յաղթել էին, և անարդար
յարձակումները յետ էին մղել օրինակելի քաջու-
թեամբ: Բայց նրանք լաւ գիտէին, որ քիւրդերը
չէին մարսի այդ ջարդը և պէտք է մի կերպ վը-
րէժը լուծէին: Սասունցիները հաշուում էին իրանց
քաջերի ոյժը, իրանց լեռների անմատչելիութիւնը
և յոյս ունէին, որ կարող են դարձեալ դիմադրել,
եթէ իրանց շուրջը թափառող քիւրդերը նորից
յարձակում գործեն նրանց վրա, թէկուզ բոլորը
միասին մի տեղ գումարված: Եւ դրանով մի կերպ
հանգստացան:

Իսկ քիւրդերը թիւրք պաշտօնեաների հետ
միասին շատ մեծ պատրաստութիւնների մէջ էին,
այնպիսի պատրաստութիւնների, որոնք հայերի
ենթադրութիւններից դուրս էին բոլորովին: Բիթ-
լիսի այն ժամանակվայ նահանգապետ Թահսին
փաշան կանչեց իր մօտ խորհրդակցութեան քիւր-

դերի գլխաւորներին, հոգեւոր պետերին՝ Զիլանի
շէյխ Մահմադին և Դուզարի շէյխ Ամարին և զա-
նազան պաշտօնեաներին: Խորհրդակցութիւնը
այդտեղ վճռեց, որ քիւրդերը կազմակերպվեն
ձմեռվայ ընթացքում, առաջիկայ զարնան համար
հրաւիրեն լեռները բարձրանալու բարեկամ աշի-
րաթները, որոնք բնակվում են աւելի հեռաւոր
տեղերում: Իսկ որովհետև քիւրդերը յայտնեցին,
որ նրանք բաւականաչափ հրացան և պատրօն-
ներ չունեն, որոշվեց, որ Թահսին-փաշան ձեռք
կը բերի այդ բոլորը պետական պահեստներից:

Թահսին-փաշան աւելի արաւ, քան նա խոս-
տացել էր: Նա կարողացաւ մինչև անգամ զին-
ւորների մի վաշտ բերել տալ, որը, գարունը
բացվելուն պէս, բարձրացաւ Սասունի լեռները
և իր վրանները զարկեց Շենքի գիւղի առաջ, Մըր-
կեմուզան կոչված խոտաւէտ մարգագետնում:

Զօրքերի գալը մի օտարոտի, անսպասելի
նորութիւն էր Սասունի ժողովրդի համար, որ
շուարած տեսնում էր ինչ որ գաղտնի մեծ պատ-
րաստութիւններ իր շուրջը: Բայց աւելի ևս մեծ
եղաւ նրա զարմանքը և զայրոյթը, երբ նա նը-
կատեց, որ Մրկեմուզանի վաշտի և քիւրդերի
մէջ ամենասերտ հաղորդակցութիւն կայ: Քիւր-
դերը գնում գալիս էին, ստանում զէնքեր և պատ-
րօններ: Սասունի ժողովուրդը չէր հաւատում իր
աչքերին: Ինչպէ՞ս. միթէ զօրքը ընդհանուրի
պաշտպանութեան համար չէ. միթէ՞ քիւրդը,
հայը կամ մի այլ ազգութիւն կամ համայնք հա-
ւասար չեն բարձր իշխանութեան և զինւորու-

թեան առաջ: Ի՞նչ, ուրեմն իշխանութիւնը միացել է ժողովրդի մի մասի հետ՝ միւսին ճնշելու, միւսին խեղդելու համար: Սասունցիները այդ և դրանց նման հազար տեսակ հարցեր էին տալիս իրանց և խոր խոցված ու վիրաւորված սրտով գլուխները թափ տալիս: Վիճակը յուսահատական էր. բայց ի՞նչ կարող էին անել: Նրանք գիտէին, որ իրանց դէմ լարված մեքենաները շատ լուրջ գործ պէտք է կատարեն. ուստի վճռել էին ոչ մի առիթ չը տալ ընդհարումի, իսկ եթէ ընդհարումը տեղի կունենայ, մնան հաւատարիմ Սասունի աւանդութիւններին և կուեն մինչև արիւնի վերջին կաթիլը:

Քիւրդերը երկար սպասեցին, տեսան, որ առիթ չը կայ, իսկ ամառը և լեռնական կեանքը շուտով պէտք է վերջանային. առիթը իրանք տուին, որով և սկսվեց այն կատաղի կոտորածը, որի հառաչանքները հասան աշխարհիս բոլոր ծայրերը:

Մեր նպատակը չէ խօսել այդ առաջին մեծ կոտորածի և նրա մանրամասնութիւնների մասին, ուր այնքան մեծ քաջութիւն ցոյց տուեց սասունցին, ուր հերոսացաւ այդ պատմական անվեհեր լեռնականը, և որին ընկճեց ոչ թէ քիւրդը, այլ թնդանօթը, պատերազմական կանօնաւոր զինւորութիւնը:

Իսկ յետոյ, հետեանքը:

Մի ամբողջ երկիր, իր բարգաւաճ տնտեսութեամբ, իր օրինակելի արտերով, այգիներով տներով և գիւղերով, աւերված, քարուքանդ արված, թալանված և այրված, ժողովուրդը կոտորված, ցրված, բանտերի մթութեան և գիճութեան

մէջ ապրելու դատապարտված, մի խօսքով՝ մի շէն ու մշակված աշխարհ բոլորովին ոչնչացրած և սարսափի ու գազանութեան զոհերով լցված:

Եւ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Միայն այն պատճառով, որ այդ երկրում ամբողջ դարերի ընթացքում տիրապետում են ազգեր, որոնք չեն գնահատում կուլտուրան, չեն գնահատում աշխարհաշէն, կանօնաւոր աշխատանքի վրա հիմնված գործունէութիւնը:


Եւ բնորոշ է, որ այդ բոլոր շարժումը, այդ բոլոր յուսահատական կռիւը թիւրքը վերագրում է ոչ այն անտանելի վիճակին, որի մէջ ապրում էր Սասունի ժողովուրդը, ոչ իր դրդումներին, ոչ իր պատրաստութիւններին, այլ արհեստական դրոշման, արհեստական կազմակերպութեան: Եւ այդ ասում է այն իշխանութիւնը, որ ինքը վաղօրոք, տարիներ շարունակ հող է պատրաստել ժողովրդի համբերութիւնը փորձելու համար, որ նոյնիսկ անեղ կոտորածի սկսվելուց երկու ամիս առաջ մի վաշտ զօրք էր բերել և Մրկիմուզանում կանգնեցրել:

Ո՛չ, այդպիսի զոհարերութեան ընդունակ է լինում միայն այն ժողովուրդը, որ ամենաշօշափելի փաստերից և դէպքերից յետոյ յուսահատվել է, որ չէ հաւատում թէ աղաչանք պաղատանքով կարելի է գործ կատարել և դիմում է մի միջոցի, որը պէտք է նրանից մեծ և անվերադառնալի զոհեր պահանջի, որ պէտք է նրանից խլի սիրելի որդիներին, եղբայրներին, քոյրերին, ծնողներին: Դա մի յուսահատական ծանր վճիռ է, մի սարսափելի երգ ում, որ պէտք

է արիւնի գնով ի կատար ածի իր ուխտը: Եւ այդ ուխտը կատարելու գնում է ոչ միայն հասակաւոր տղամարդը, այլ և՛ կինը, և՛ ծերը և՛ պատանին, աշխարհականը և հոգևորականը: Այստեղ ամբողջ երկիրն է հառաչում, ամբողջ երկիրն է բողոքում և կուռում: Այդտեղ կեանքը, եղած վիճակն է ամեն ինչ որոշում, և ոչ թէ արհեստական գրգուժը: Այդտեղ կարող են դործել, ի հարկէ, և ագիտատօրներ, բայց նրանք չեն շարժման և դիմադրութեան աղբիւրն ու հիմքը. նրանք միայն օգտվել են եղած տրամադրութիւնից և միացել նրան:

Սասունը միայն մի մասն է ընդհանուր դրութեան, նա միայն մի խիստ լուսաբանութիւն է տիրող կարգերի համար: Սասունը մի երես է այն տխուր պատմութեան, որ հաղարտեալ փոփոխութիւններով կրկնվում է Փոքր-Ասիայի գաւառներում: Սասունը ընդհանուր յուսահատութեան ամենաուժգին արտայայտութիւններից մէկն է:


Երկիրը պէտք է խաղաղվի: Նրան պէտք վերադարձնել իր զաւակներին, որոնք միայն կարող են նրան կեանք տալ: Բայց հաստատ գրաւական է հարկաւոր ժողովրդի համար, որ նա գիտենայ, թէ նա է իր աշխատանքի տէրը, թէ նա կարող է այսուհետև հանգիստ հանգարտ նուիրել իրան իր տնտեսութեանը, իր որդիների կրթութեանը, ապահովված լինելով արդար զատատանով և իրաւունքների անխախտութեամբ: Նրան մարդավարի կեանք է հարկաւոր:



ՄԱՍՈՒՆ

Մասշտաբ 500.000

Կազմեց Լ. Բալանթար





504

24

7488
7489

0003732
0003733

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003733

ՀՀ Ազգային գրադարան



NL0003732

